


Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Крyтyиoн» (oбpaзoвaниe) еженедельник 12.10.2022թ. չորեքշաբթի թիվ 42-43 (1067-1068)

Ուսուցչի օրվա կապակցությամբ

Դպրոցի վերելքի գործընթացը մեկնարկել է

ՀՀ Վարչապետ **Նիկոլ ՓԱՇԻՆՅԱՆԸ** շնորհավորական ուղերձ է հղել Հանրապետության մանկավարժներին: Ուղերձում մասնավորապես ասված է.



«Սիրելի ուսուցիչներ, Շնորհավորում եմ բոլորիդ եւ շնորհավորում եմ բոլորիս՝ Ուսուցչի օրվա առիթով: Այս տարի ձեր մասնագիտական օրը դիմավորում ենք ուսուցչի աշխատանքի նկատմամբ պետական նոր վերաբերմունքի արձանագրված իրողությամբ:

Ուսուցիչների կամավոր ատեստավորման նոր համակարգը, տարակարգի համակարգի բարեփոխումները մի բանի մասին են վկայում միայն, որ կառավարությունը ոչ միայն շնորհավորական ուղերձներով, այլև կոնկրետ գործով է ճանաչում ուսուցչի աշխատանքի անկյունաքարային բնույթը:

Եթե պետությունը ցանկանում է կայանալ, պետք է նախ դպրոցը կայացնի եւ ուժեղացնի դպրոցի հենասյունը հանդիսացող ուսուցչին, եւ մենք դա ենք անում: Ինչպես կառավարության վերջին միտքերից մեկում ասացի ուսուցչի աշխատանքը պետք է դառնա ամենաբարձր վճարվողներից՝ առնվազն պետական համակարգում: Եվ ուսուցիչ՝ պիտի նշանակի ոչ միայն բարձր աշխատավարձ ստացող, այլև բարձր որակավորում ունեցող:

Նոր համակարգը տալիս է նման հնարավորություն, բայց սա միայն սկիզբն է: Ուսուցչի աշխատավարձի բարձրացման այս համակարգը, որտեղ, ըստ էության, որոշումները կայացնում է ինքը՝ ուսուցիչը, պետք է շարունակաբար ու պարբերաբար գործի հնգամյա շրջափուլերով, եւ երկրորդ շրջափուլից արդեն, ուսուցչի դրույքով ու տարակարգով ապահովված աշխատավարձը պիտի հասնի նախարարական մակարդակի աշխատավարձի:

Եվ սա ձեզ համար չենք անում, սա անում ենք պետության համար, ապագայի համար, որովհետեւ, մեծ հաշվով, դուք եւ ձեր աշխատանքն է որոշում քանի գիտնական դուրս կգա դպրոցից, քանի բժիշկ, քանի հետախույզ, քանի զինվորական, քանի շինարար, քանի արվեստագետ եւ ինչպիսի հոգեւոր ու արժեքային կապով կապված կլինեն նրանք իրենց մասնագիտության եւ իրենց պետության՝ Հայաստանի Հանրապետության հետ:

Մենք պիտի առանձնահատուկ հոգ տանենք գյուղական բնակավայրերի մեր ուսուցիչների համար, որպեսզի նրանք հեռու չզգան իրենց:

Հանրակրթության ոլորտում, ըստ էության, մենք ավարտել ենք նախագծման աշխատանքները. կամավոր ատեստավորման, տարակարգերի նոր համակարգի, նախադպրոցական կրթության եւ հանրակրթության պետական չափորոշիչների, դպրոցների կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման, համայնքային կրթահամալիրների ստեղծման մեր ծրագրերը թողարկված են, դպրոցի վերելքի գործընթացը՝ մեկնարկած:

Սիրում եմ բոլորիդ, հպարտանում եմ բոլորովդ եւ խոնարհվում եմ բոլորիդ առաջը»:

Գիտակից ու ազատ քաղաքացու կերտողը

Նախագահ **Վահագն ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ՝** Հանրապետության մանկավարժներին ուղված շնորհավորական ուղերձում ասված է.



«Սիրելի ուսուցիչներ, Սրտանց շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ: Դուք այն կամուրջն եք, որը պետք է ապահովի սերունդների միջև գիտելիքի, դաստիարակության, մարդկային առաքինության եւ քաղաքացիական գիտակցության անխաթար կապը:

Որեւէ ժամանակաշրջանում կամ որեւէ հասարակության մեջ անհնար է գերազնահատել ուսուցչի դերը հանրային գիտակցության ձևավորման, կրթության ու զարգացման գործում, քանզի ուսուցիչը զուտ մասնագիտություն կամ աշխատանքի տեսակ չէ, այլ կոչում եւ անմնացորդ նվիրում, շարունակական ջանք ու կատարելագործում:

Չեզանից, ձեր պատասխանատու աշխատանքից է մեծապես կախված, թե ինչպիսի Հայաստան եւ ինչպիսի հասարակություն կունենանք վաղը, որովհետեւ դուք միայն տեղեկության փոխանցման պարզունակ գործընթացի մասնակից կամ իրականացնողը չեք, այլ գիտակից ու ազատ քաղաքացու կերտողը, գիտելիքով զինված սերունդների դաստիարակողն ու դրանով իսկ բարեկեցիկ ու զարգացող Հայաստանի լինելիության երաշխավորը:

Այսօր, մեր երկրի համար վճռորոշ ժամանակաշրջանում բազմակի անգամ մեծ պատասխանատվություն է դրված ձեր ուսերին, որովհետեւ այսօր առավել քան երբեք մենք կարիք ունենք լինել ուժեղ՝ մտքով, գիտելիքով եւ կրթությամբ եւ դուք՝ այդ ամենը փոխանցելու ձեր կարողությամբ եւ հմտությամբ, մեր զավակների, թոռների ու սերունդների բարեկեցության, անվտանգության, մեր երկրի հզորության կերտողն եք:

Սիրելի ուսուցիչներ, Մեկ անգամ եւս շնորհավորում եմ ձեզ՝ Ուսուցչի օրվա առթիվ, մաղթում տոկունություն, աշխատանքային շարունակական հաջողություններ ու անձնական երջանկություն»:

Սրբոց Թարգմանչաց

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Սրբոց Թարգմանչաց տոնը նշում է հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը. այս տարի այն նշվեց **հոկտեմբերի 8-ին**: Սուրբ Թարգմանիչներ **Մեսրոպ Մաշտոցի, Եղիշեի, Սովսես Խորենացու, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու** եւ **Ներսես Շնորհալու** տոնը վաղուց ձեռք է բերել համազգային նշանակություն՝ խորհրդանշելով ազգային զարթոնք, ազգերի միջև մշակութային փոխգործակցություն, համամարդկային բանական գլուխգործոցների արժեւորում:

տե՛ս՝ նաեւ էջ 12-13

Սերունդների միջև՝ դեսպան ու թարգմանիչ


Մասնագիտական տոնի առթիվ ուսուցիչներին ուղերձ է հղել նաեւ ՀՀ ԱԾ Նախագահ **Ալեն ՍԻՄՈՆՅԱՆԸ**.



«Սիրելի ուսուցիչներ, Շնորհավորում եմ մասնագիտական տոնի առթիվ: Մեծ գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ յուրաքանչյուր մարդ իր կյանքում ունի իր ուսուցիչը, ում խորհուրդները երբեք չեն հնանում, իսկ փոխանցած գիտելիքը միշտ ճիշտ պահին է պետք գալիս: Հայտնի խոսք է, որ հնարավոր պատերազմները կանխում կամ հաղթում են՝ դպրոցում ստացած գիտելիքների եւ ուսուցիչների խորիմաստ շրջահայացության ու կյանքի մարտահրավերներին պատրաստ սերունդներ կրթելու ունակության շնորհիվ:

Մաղթում եմ, որ երբեք բացառիկ հեղինակության տիտղոսը չգիջեք, չթուլանաք ու շարունակեք ծնողական ջերմությամբ սիրել տալ ուսումը: Անվիճելի է, որ ձեզ է վստահված սերունդների միջև դեսպանի ու թարգմանիչ դերը, դուք կարողանում եք երեխային դարձնել աշակերտ ու հետո՝ քաղաքացի:

Հպարտանում եմ զմահատում ենք ձեր աշխատանքը, խոնարհվում բազմաչարչար վաստակի առաջ»:



Պաշտոնական

Շնորհվել են SS ոլորտում 33 վարչապետի կրթական մրցանակները

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը զարգացնելու, կատարելագործելու և խրախուսելու նպատակով բուհերի լավագույն ուսանողների, ասպիրանտների և աշակերտների համար 33 կառավարության որոշմամբ սահմանվել է կրթական 6 մրցանակ, որոնք շնորհվում են ամեն տարի: Այս տարի արդեն 18-րդ անգամ տեղի է ունեցել կրթական պարգևների հանձնման մրցանակաբաշխությունը, որի ընթացքում 29 ուսանող արժանացել է SS ոլորտում 33 վարչապետի կրթական մրցանակների:

Փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը «Սինոփսիս Արմենիա» ընկերության գիտատարտադրական համալիրում կազմակերպված արարողության ժամանակ վարչապետի անունից հանձնել է կրթական մրցանակները: Մրցանակների հանձնման արարողությանը մասնակցել են նաև 33 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, «Սինոփսիս» ընկերության նախագահ ու գլխավոր գործառնական տնօրեն Սասին Ղազին և «Սինոփսիս Արմենիա» ընկերության տնօրեն Դավիթ Մուսայելյանը:

Շնորհավորելով բոլոր մրցանակակիրներին փոխվարչապետ Սիեր Գրիգորյանը նշել է. «Ինձ համար պատիվ է այսօր վարչապետի անունից շնորհելու SS բնագավառում 2022 թվականի կրթական մրցանակները: Գաղտնիք չէ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ունի ռազմավարական նշանակություն մեր երկրի համար: Մերօրյա իրականության մեջ այդ ոլորտի զարգացումը կարևորում ենք ոչ միայն տնտեսական տեսանկյունից, այլ նաև դիտարկում որպես բոլոր առանցքային և կենսական նշանակություն ունեցող ոլորտների, ի վերջո նաև մարդկային կապիտալի զարգացման շարժիչ ուժ: Դուք ձեր գիտելիքներով, ստեղծարարությամբ



և հմտություններով ստեղծում եք վաղվա Գաղտնիք: Ցանկանում եմ, որպեսզի այս մրցանակը լինի ամենափոքրը ձեր ապագա գործունեության մեջ ու ստեղծի նոր հնարավորություններ: Ստորում եմ մշտապես շարժվել ժամանակին համահունչ, զգալ SS ոլորտում համաշխարհային միտումները և նույնիսկ դրանցից առաջ անցնել»: Փոխվարչապետը շնորհակալություն է հայտնել «Սինոփսիս» ընկերությանը՝ այս կարևոր միջոցառումը նախաձեռնելու և տարիներ շարունակ կազմակերպելու համար:

«Սինոփսիս» ընկերության նախագահ ու գլխավոր գործառնական տնօրեն Սասին Ղազին էլ իր հերթին նշել է՝ SS-ն դառնում է շատ ավելին, քան պարզապես լավ աշխատանքը. այն սկսում է փոխել մարդկանց կենսակերպը. «Սա ոլորտ է, որը ոչ միայն ֆինանսական առումով ձեզ կբավարարի,

այլ մեծագույն բավարարվածություն կբերի առ այն, թե ինչպես եք դուք իսկապես փոխում մարդկանց, տնտեսության, երկրի հանդիմանական ձեռքը»:

«Սինոփսիս Արմենիա» ընկերության տնօրեն Դավիթ Մուսայելյանի խոսքով տեղեկատվական տեխնոլոգիաները Գաղտնիքի տնտեսության զարգացման գերակայությունն են: «Գաղտնիքում այսօր գործում են շուրջ 3000 SS ընկերություններ, որոնց հիմնական կորիզը կազմում են մեր տաղանդաշատ պատանիները. նրանցից շատերը նաև այս մրցանակաբաշխության միջոցով են բացահայտվել և խրախուսվել: Մրցանակաբաշխությունը կազմակերպելու մեր հիմնական խնդիրն այն էր, որ մեր տաղանդաշատ պատանիներին ուղղորդենք դեպի գիտակրթական ոլորտ և տեխնոլոգիական ձեռներեցություն»,- նշել

է նա՝ ընդգծելով, որ մրցանակաբաշխությունը «Սինոփսիս» ընկերությունն իրականացնում է «Գաղտնիք» համահայկական հիմնադրամի հետ համատեղ:

Գաղտնիքի համալսարանի ուսանող Նոնա Պետրոսյանը, որն աշխատում է «Սինոփսիս Արմենիա» ընկերությունում, մեզ հետ զրույցում շնորհակալություն է հայտնել իր դասախոսներին, որոնք, անկախ ուսումնական գործընթացի դժվարություններից, պահել են հետաքրքրությունը ուսման և անձնային աճի նկատմամբ:

«Գետաքրքիր միջոցառում էր, որն ունի հետաքրքիր նպատակներ: SS ոլորտը շատ կարևոր է, և պետք է այս ոլորտում հաջողությունները շատ լինեն, քանի որ դրանք ծառայում են երկրի զարգացմանը»,- նշում է մեկ այլ մրցանակակիր Զինար Մովսիսյանը:

Նշենք, որ յուրաքանչյուր անվանակարգի համար բուհերը ներկայացրել են 10-ական ուսանողներ: Այս տարի հարցազրույցներին մասնակցել է 6 բուհի 116 ուսանող, որոնցից մրցանակի է արժանացել 29-ը: Գլխավոր մրցանակ այն տարի չի շնորհվել: «Լավագույն մագիստրանտ»՝ 1-ին և 2-րդ կարգի մրցանակների համար նախատեսված է համապատասխանաբար 750 և 500 ԱՄՆ դոլարին համարժեք 33 դրամ, յուրաքանչյուր կարգում՝ 6 մրցանակակիր, «Լավագույն բակալավր»՝ 1-ին և 2-րդ կարգի մրցանակների համարժեք 750 և 500 ԱՄՆ դոլարին համարժեք 33 դրամ, յուրաքանչյուր կարգում՝ 6 մրցանակակիր, իսկ «Լավագույն ասպիրանտ»՝ 1-ին և 2-րդ կարգի մրցանակների համարժեք 1000 և 750 ԱՄՆ դոլարին համարժեք 33 դրամ, յուրաքանչյուր կարգում՝ 6 մրցանակակիր:

Յեղիսե ԳՈՎԱՆՆԻՍԱՆ

Առաջին ընթերցմամբ Խորհրդարանն ընդունել է 33 կրթության միջնադպրոցի թվականը զարգացման պետական ծրագիրը

Աժ հոկտեմբերի 4-ի լիագումար նիստում քննարկվել է առաջին ընթերցմամբ ընդունվել է «33 կրթության միջնադպրոցի թվականը զարգացման պետական ծրագիրը» օրենքի նախագիծը:

Ներկայացնելով նախագիծը՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը նշել է, որ ծրագիրն անդրադառնում է կրթության բոլոր մակարդակներին՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն կրթություն: Ըստ ծրագրի՝ Գաղտնիքի առնվազն չորս բուհեր մինչև 2030 թ. կընդգրկվեն միջազգային լավագույն 500 համալսարանների ցանկում: Կատեգորիա 100 տոկոս պետական ֆինանսավորման մինչև 8 բուհ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը:

«33 կրթության միջնադպրոցի թվականը զարգացման պետական ծրագիրը» նախատեսում է էականորեն փոխակերպել բարձրագույն կրթական համակարգը, որպեսզի այն լինի միջազգայնորեն մրցունակ: Այս նպատակադրման համար նախատեսվում են հայաստանյան բուհերի միջազգայնացման, կրթության-գիտության փոխգործակցության խթանման միջոցառումներ: Բոլոր բուհերի համար կսահմանվեն միջազգայնորեն ընդունելի միասնական լիցենզավորման և հավատարմագրման պահանջներ՝ ըստ ենթակառուցվածքների, ընդհանուր տարածքի, կառավարման համակարգի, ուսանող-դասախոս հարաբերակցության և

այլ չափանիշների: Կներդրվեն որակի ապահովման միասնական գործիքներ: Նախատեսվում են հավասար մրցակցային դաշտի ստեղծում, բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում օտար լեզվով դասավանդման հնարավորությունների ընդլայնում, ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի որակի բարելավում»,- նշել է նախարար Վահրամ Դումանյանը՝ ընդգծելով, որ փաստաթղթի հիմքում կրթության որակի բարձրացումն է կրթության բոլոր աստիճաններում:

Նա նաև նշել է, որ նախատեսվում է առաջիկա 8 տարվա ընթացքում կտրուկ ավելացնել հայաստանյան բուհերում սովորող ուսանողների թիվը:

Նախադպրոցական կրթության առաջնային խնդիրը, ըստ նոր ռազմավարության, 3-5 տարեկան երեխաների առնվազն 95 տոկոսը պետք է ընդգրկված լինեն նախադպրոցական ծրագրերում, և նախքան դպրոց ընդունվելը նրանք առնվազն մեկ տարի պետք է հաճախեն մանկապարտեզ:

«Բոլոր դպրոցները կունենան կահավորված և արդիական սարքավորումներով հագեցված լաբորատորիաներ, սանիտարահիգիենիկ և անվտանգության ստանդարտներին բավարարող ու համընդհանուր մատչելի շենքեր, կապահովվի համացանցի որակյալ հասանելիություն:

Բոլոր ուսումնական հաստատություն-



ները համալրված կլինեն որակավորված մանկավարժներով: Մանկավարժի, դասախոսի, դասավանդողի գործունեությունը կլինի պատշաճ վարձատրվող և հասարակական հեղինակություն վայելող մասնագիտություն,- մանրամասնել է Վ. Դումանյանը և հավելել,- ոչ մի երեխա մեր երկրում դուրս չի մնալու պարտադիր կրթության համակարգից»:

Ըստ նախարարի՝ Կրթության զարգացման պետական նախորդ ծրագիրն ընդունվել էր 2011 թ., գործել մինչև 2015 թ.: Նոր ծրագրով սահմանված է երեք ռազմավարական ուղղություն. առաջին՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում 33 ամբողջ տարածքում, երկրորդ՝ կրթության արդյու-

նավետության բարձրացում, ինչը կապահովի ռեսուրսի առավելագույն օպտիմալ և արդյունահենք տեղաբաշխում, երրորդ՝ կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում ու արտահանում շահեկանորեն փոխակերպելով Գաղտնիքի դերը գլոբալ կրթական համակարգում:

Փաստաթղթի կարևոր հայեցակարգային դրույթներն առնչվում են հասանելի և մատչելի ուսումնական հաստատությունների ապահովմանը, դպրոց ընդունվող բոլոր երեխաների՝ առնվազն մեկ տարի նախադպրոցական ծրագրերում ընդգրկվածությունը, բոլոր խոշորացված համայնքներում մտուրային ծառայությունների գործարկմանը, դպրոցների պատշաճ կահավորմանը և արդիական սարքավորումներով հագեցմանը, շենքային պայմանների ու ենթակառուցվածքների բարելավմանը, թվային, բնագիտության, տեխնոլոգիաների, ճարտարագիտության, մաթեմատիկայի և այլ լաբորատորիաների, գրադարանների նորարարական ոճով կահավորմանը:

Եզրափակելով խոսքը՝ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանն ավելացրել է, որ հենավար կրթական ծառայությունները՝ էլեկտրոնային բաց պաշարները, առցանց դասընթացները, ներդրվելու են կրթության բոլոր մակարդակներում, այդ թվում գյուղական և սահմանամերձ համայնքներում:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշխարհի հետ

Ուսուցչի օրվա առթիվ

Հանդիպումներ՝ մի շարք երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի գլխավորած պատվիրակությունը հոկտեմբերի 5-7-ը մասնակցել է Կիպրոսի Հանրապետությունում անցկացվող «Կրթությունը հանուն կայուն զարգացման, շրջանաձեւ տնտեսություն. կայուն ենթակառուցվածք եւ կայուն զբոսաշրջություն» խորագրով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի 9-րդ նախարարական համաժողովին, որի շրջանակում հանդես է եկել զեկույցով: Պատվիրակության կազմում էին նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանն ու խորհրդական Արման Անդրիկյանը:



հետ հանդիպման ընթացքում էլ անդրադարձ է եղել կրթության ոլորտում սերբական փորձի ուսումնասիրման հարցերին:

Կիպրոսի Հանրապետություն կատարած այցի շրջանակում նախարարի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել մի շարք երկրների բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Մասնավորապես՝ Կրաստանի կրթության եւ գիտության նախարար Միլեթի Զիսենկելի հետ հանդիպմանը քննարկվել են բարձրագույն կրթության ոլորտին առնչվող հարցեր, անդրադարձ է կատարվել նաեւ ՀՀ բուհերում վրացագիտության, իսկ Կրաստանի բուհերում հայագիտական ամբիոնների գործունեությանը:

ԿԳՄՍ նախարարը հանդիպել է նաեւ Կիպրոսի կրթության, մշակույթի, սպորտի եւ երիտասարդության նախարար Պրոդրոմոս Պրոդրոմուի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է ԿԳՄՍ ոլորտներում համագործակցության եւ նոր համաձայնագիր կնքելու հնարավորության հարցը:

Սերբիայի կրթության, գիտության եւ տեխնոլոգիական զարգացման պետնախարար Բրանկո Ռուժիչի

Հեղինակ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանի շնորհավորական ուղերձը

Սիրելի՛ ուսուցիչներ, Խոնարհումով ու երախտագիտությամբ շնորհավորում եմ ձեզ՝ Ուսուցչի տոնի կապակցությամբ:



Մենք դժվարին օրեր ենք ապրում, որտեղ յուրաքանչյուրիս դերն ու առաքելությունը կրկնակի կարեւոր են, ձերը՝ առավել քան: Եվ շնորհակալ եմ հատկապես այս օրերին ձեր աշխատանքը պատվով իրականացնելու եւ առկա մարտահրավերներին դիմակայելու համար:

Մենք լավ ուսուցիչ ենք պարտական ոչ միայն գիտելիքով զինված աշակերտի, այլեւ վաղվա գիտակից քաղաքացու, անմնացորդ հայրենասերի, երջանիկ անհատի կայացման համար:

Մշտապես ձգտե՛ք կատարելագործման՝ օր օրի ավելին անելու եւ արդյունքը բազմապատկելու ճանապարհով: Ընդհանուր առմամբ անգնահատելի է, առաքելությունը՝ սրբազան, քանի որ դուք ապագայի կերտման առաջամարտիկներն եք:

Վստահ եղե՛ք, ՀՀ կառավարությունը յուրաքանչյուրիդ կողքին է ու աջակիցը, եւ յուրաքանչյուր բարեփոխում միտված է բարելավելու ձեր աշխատանքային գործունեությունն ու կրթական ոլորտը եւ լուծելու առկա խնդիրները:

Մաղթում եմ ձեզ քաջառողջություն, ամուր կամք ու անսպառ եռանդ: Զեր պատասխանատու գործում սերը թող բազմապատկվի եւ վարակի նաեւ ձեր աշակերտներին:

Մարզական

«Մեր երկիրն առաջինն էր աշխարհում, որ շախմատը, որպես պարտադիր առարկա, ներառեց հանրակրթական ծրագրում»

Երեւանի շախմատի ֆեդերացիայի նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ու Երեւանի քաղաքապետարանի աջակցությամբ Երեւանում այսօր մեկնարկել է «Երեւան օֆեն» շախմատի միջազգային մրցաշարը, որն այս տարի անցկացվում է արդեն 4-րդ անգամ:



Հայաստանում շախմատի մեծ մասսայականությունը. «Մեր երկիրն առաջինն էր աշխարհում, որ շախմատը, որպես պարտադիր առարկա, ներառեց հանրակրթական ծրագրում: Դրա արդյունքում՝ հազարավոր երեխաներ այսօր տիրապետում են ամենափոքր խաղերից մեկի գաղտնիքներին: Շուտով նրանցից շատերն ավելի կհմտանան, եւ արդյունքներն էլ երկար սպասել չեն տա, իսկ նրանք, ովքեր շախմատիստ չեն դառնա, կունենան վերլուծական միտք, որն այնքան անհրաժեշտ է մեր օրերում»:

Երեւանն առաջին անգամ մրցաշարն ընդունել է 2016 թվականին, երկրորդ անգամ՝ 2017-ին, իսկ վերջինը կայացել է նախորդ տարի: Տարեցտարի մասնակիցների շրջանակն ու աշխարհագրությունը մեծանում են: Այս անգամ «Երեւան օֆեն» մասնակցում է 15 երկրի շուրջ 292 շախմատիստ, որից 55-ը միջազգային կոչում ունեցող, 22-ը՝ գրոսմայստեր: Մասնակիցներն Իրանից են, Կրաստանից, Ռուսաստանից, Հնդկաստանից, Ուկրաինայից, Լիտվայից, Ֆրանսիայից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Ղազախստանից, Սինգապուրից, Ավստրալիայից, Հունաստանից, Թուրքիայից եւ, իհարկե, Հայաստանից:

Մրցանակային ընդհանուր ֆոնդը 14 միլիոն դրամ է: Դրամական պարգևներ են նախատեսված 1-ից 20-րդ հորիզոնական-

ները զբաղեցրած շախմատիստների համար: Մասնավորապես՝ Ա խմբի հաղթողը կստանա 2 մլն 600 հազար դրամ:

Մրցանակներ են սահմանված նաեւ կանանց 1-ին եւ 2-րդ տեղը գրաված մասնակիցների, 50-ից բարձր տարիքի շախմատիստների շրջանակում հաղթող ճանաչված մասնակցի եւ Բ խմբի մինչեւ 10 տարեկանների մրցապայքարում հաղթող դարձած մասնակցի համար:

Երեւանի շախմատի ֆեդերացիայի նախագահ Մխիթար Հայրապետյանը ողջույնի խոսքում ընդգծել է շախմատի վերաբերյալ տարատեսակ ընկալումներ կան. «Ուզում եմ պատմել մեր ընկալումների մասին: Շախմատն ազնվության, արդարության, զսպվածության, հանդուրժողականության եւ մրցակցին հարգելու մասին է: Գուցեն աշխարհում կլինեն տարատեսակ ընկալումներ, թե շախմատն ագրեսիայի կամ ապօրինի կերպով մրցակցի խաղաքարերին տիրանալու մասին է, բայց մենք հավատացած ենք, որ ագրեսիան եւ խաղի կանոններից դուրս որեւէ քայլ անելիք չունեն խաղատախտակի շուրջ: Ահա սա է հիմնական պատճառը, թե ինչու մենք՝ հայերս, այսչափ մեծ ուշադրություն ենք դարձնում շախմատի մասսայականացմանը մեր երկրում: Ունենք հույս եւ հանգստություն, որ եթե շատերը շախմատ խաղան, եթե շախմատի էությունն ու փիլիսոփայությունը շատերը հասկանան այնպես, ինչպես մեր երկրում, այնպես էլ՝ ամբողջ աշխարհում, այդքան աշխարհն ավելի լավ կդառնա»:

Մխիթար Հայրապետյանն ընդգծել է այս 4 տարիներն ապացուցել են, որ «Երեւան օֆեն» կայացել է, եւ դրա ընթացքն այլեւ անկասելի է:

Մրցաշարի բացման արարողությունից հետո 3 խաղատախտակի վրա խորհրդանշական առաջին քայլը կատարել են Վահրամ Դումանյանը, Մխիթար Հայրապետյանն ու Տիգրան Ավինյանը:

Վահրամ Դումանյանը նաեւ կարեւորել է

Խորհրդարան

Աշխարհի հետ

Տարկետում տալու նախագիծն ընդունվել է

Ազգային ժողովի լիազուստ միատուն երկրորդ ընթերցմամբ քննարկվել է ընդունվել է ակադեմիական հիմքով տարկետում տալու օրենսդրական փոփոխության առաջարկը:

«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասի» 33 օրենքում լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծն ԱԺ նիստում ներկայացրել է 33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը՝ նշելով, որ օրենսդրական փոփոխության առաջարկն անցել է հանրային քննարկումների տեսական փուլ, դրական եզրակացություն է ստացել ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում:

Առաջարկվող փոփոխությամբ 33 կառավարությանը կտրվի լիազորություն՝ սահմանելու բուհերի եւ մասնագիտությունների ցանկ, ըստ որի՝ սովորողները կստանան ակադեմիական տարկետում՝ բարձրագույն կրթության բոլոր երեք աստիճաններում՝ բակալավրիատում, մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում:

«Սա, առաջին հերթին, վերաբերում է բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ՔՏԾՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ ու գերակա ոլորտներին: Պարտադիր զինվորական ծառայության գորակրոջից տարկետում տրամադրելու կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ բուհերի ու բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ՔՏԾՄ) ուղղություններով համապատասխան մասնագիտությունների ցանկը սահմանելու է 33 կառավարությունը՝ հաշվի առնելով պետության գերակայությունները», - նշել է Վահրամ Դումանյանը:

Առաջարկվող երկրորդ փոփոխությունն առնչվում է ակադեմիական հիմքով տարկետման առավելագույն տարիքային շեմին: Ըստ այդմ՝ Հայաստանում ուսումնառության համար զինծառայությունից տարկետում կտրվի մինչեւ 28 տարեկանը՝ ներկայումս գործող 27 տարեկանի փոխարեն:

«Այժմ զորակոչի տարիքը մինչեւ 27 տարեկանն է: Սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ մշտական զինվորների համար տարկետում ստացած սովորողներն ասպիրանտուրայի երկրորդ կուրսում արդեն իսկ զորակոչվում են բանակ՝ օրենքի պահանջի համաձայն: Այս խնդիրն առաջացել է հանրակրթության տեղողության փոփոխության պատճառով: Հանրակրթության տեղողությունը նախկինում 10 տարի էր, այժմ դարձել է 12 տարի, ինչով պայմանավորված կրթության ցիկլի տեղողությունը երկարաձգվել է, մինչդեռ 27 տարվա շեմը մնացել է անփոփոխ: Նախագծով առաջարկում ենք ուսումնական հիմքով զորակոչից տարկետման իրավունքի տարիքային շեմը մեկ տարով ավելացնել եւ սահմանել 28 տարեկանը, որով կլուծվի խնդիրը», - ասել է նախարարը:

Աժ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը ներկայացրել է ԱԺ պատգամավոր, նշված հանձնաժողովի անդամ Վիլեն Գաբրիելյանը:

Կարինե ՄԱՆՈՒՎՅԱՆ



«Կրթությունը Ռուսաստանում. Երեւան-2022»

Երեւանում գիտության եւ մշակույթի ռուսական կենտրոնը, ԳՄԱ Մախարաբյանի աջակցությամբ, ԳԱԱ Մախարաբյանի բաց տարածքում կազմակերպել է «Կրթությունը Ռուսաստանում. Երեւան-2022» խորագրով ՌԴ բուհերի ցուցահանդեսը:

Միջոցառման մասնակիցներին ողջունել է ԳՄԱ Մախարաբյանի տեղակալ Կարեն Թռչունյանը՝ ընդգծելով, որ երկու երկրների միջեւ համագործակցության լայն շրջանակը, մասնավորապես՝ ռուսաճանաչական փոխանակման ծրագրերը, կրթության եւ գիտատեխնիկական ոլորտներում գործակցության ընդլայնումը եւ համատեղ միջոցառումների իրականացումը Մախարաբյանի առաջնահերթություններից են:

«Կրթատեղեկատվական ցուցահանդեսները լավագույն հարթակներն են՝ ամրապնդելու մեր սերտ համագործակցությունը եւ նախանշելու նոր նախագծեր: Երեւանում գիտության եւ մշակույթի ռուսական կենտրոնի շնորհիվ վերջին տարիներին ավելացել է կրթագիտական համատեղ նախագծերի քանակը, ստեղծվել են նախադրյալներ բուհերի եւ բիզնեսի համագործակցության համար, որն էլ անշուշտ նպաստում է երկու երկրների կրթության եւ գիտության ոլորտների զարգացմանը: Նման միջոցառումները նաեւ հնարավորություն են տալիս աշակերտներին, դիմողներին, ուսանողներին, ինչպես նաեւ գիտաշխատողներին իրենց ներդրումն ունենալ երկու երկրների կրթագիտական ոլորտների զարգացման մեջ», - նշել է Մախարաբյանի տեղակալը՝ շնորհակալություն հայտնելով ցուցահանդեսի կազմակերպիչներին:

Ցուցահանդեսի մասնակիցներին ողջունել են նաեւ ԳԱԱ ակադեմիայի նախագահ Աշոտ Սաղյանը եւ ԳՄԱ Մախարաբյանի տեղակալ Կարեն Թռչունյանը:



Գահ Աշոտ Սաղյանը եւ ԳՄԱ ՌԴ դեսպանատան ներկայացուցիչ Մաքսիմ Սելեզնյովը: Վերջինս բարձր է գնահատել կրթության եւ գիտատեխնիկական ոլորտներում երկու երկրների միջեւ համագործակցությունը եւ համատեղ նոր նախագծերի իրականացումը՝ դասախոսների վերապատրաստման եւ ուսանողների շարժունության տեսանկյունից:

Նա հատկանշական է համարել, որ ցուցահանդեսն անցկացվում է երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը եւ «ԳՄԱ ՌԴ-ի միջեւ բարեկամության, համագործակցության եւ փոխադարձ օգնության պայմանագրի» ստորագրման 25-ամյակը նշանավորող հոբելյանական տարում:

Այդ կապակցությամբ կրթության եւ գիտատեխնիկական ոլորտի պետական բաղադրականության մեջ ներդրման համար կրթության ոլորտի մի շարք գործիչների

հանձնվել են ՌԴ գիտության եւ բարձրագույն կրթության նախարարության մեդալներ: Գերատեսչական մեդալներով պարգևատրվել են Վ. Բոլյուսովի անվան պետական համալսարանի ռեկտոր Կարինե Հարությունյանը, Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտոր Արմեն Մուրադյանը, «Թեքեյան մշակութային կենտրոնի» տնօրեն Ռուբեն Միրզախանյանը, 33 մի շարք այլ բուհերի եւ ՌԴ մասնաճյուղերի աշխատակիցներ:

Երկրորդ ցուցահանդեսի ընթացքում 33 դպրոցների ավագ դասարանների աշակերտները, ինչպես նաեւ ուսանողները, հնարավորություն են ունենցել ծանոթանալու ՌԴ 10 առաջատար բուհերի եւ 33-ում գործող ՌԴ բուհերի երեք մասնաճյուղերի կրթական եւ գիտական ներուժին, ինչպես նաեւ օտարերկրյա բաղադրացիների համար Ռուսաստանի բուհերում անվճար սովորելու ծրագրերին:

Հանդիպում Համաշխարհային բանկի պատվիրակության հետ

33 կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը ընդունել է Համաշխարհային բանկի մասնավոր հատվածի ավագ մասնագետ Իֆեյինվա Օնուգանի գլխավորած պատվիրակությանը, որի կազմում էին ավագ տնտեսագետ Ռենատա Ֆրեյտաս Լեմոսը, խորհրդատուներ Խավիեր Բոտերոն, Պիտեր Լինդհոլմը եւ Գոհար Մալունյանը:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանը, ԿԳՄԱ բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության ռազմավարական պլանավորման բաժնի պետ Տաթևիկ Ղարիբյանը եւ այլք:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մագիստրոսական եւ ասպիրանտական կրթական ծրագրերի արդյունավետության բարձրացման, ինչպես նաեւ գիտության առեստրայնացման ու արդիականացման վերաբերյալ մի շարք հարցեր:

ԿԳՄԱ Մախարաբյանի տեղակալը տեղեկացրել է, որ ներկայումս հանրային քննարկման է դրված «Բարձրագույն կրթության եւ գիտության մասին» 33 օրենքի լրամշակված նախագիծը, որն ավելի վաղ երկու դրույթով ճանաչվել էր հակասահմանադրական եւ վերադարձվել խմբագրման: Կարեն Թռչունյանի խոսքով՝ նախօրեին Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է «Կրթության զարգացման միջև 2030 թվականը պետական ծրագիրը», որը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվելուց հետո կունենա օրենքի ուժ: Նա շեշտել է, որ ծրագրից բխող



գործողությունների պլանում ամրագրված է նաեւ ակադեմիական քաղաք հիմնելու ծրագիրը: Նախագծի հիմնական նպատակը, ըստ փոխնախարարի, բարձրագույն կրթության արդյունավետության բարձրացումն է եւ արդիականացումը, ինչպես նաեւ համապատասխան ենթակառուցվածքների զարգացումը: Ըստ փոխնախարարի՝ նոր կրթական ծրագրերը կամ առկա ծրագրերի բարելավումը պետք է բխեն գիտակրթական հանրույթի շահերից եւ համահունչ լինեն Կրթության ռազմավարության ու ակադեմիական քաղաքի հայեցակարգի սկզբունքներին:

Համաշխարհային բանկի մասնավոր հատվածի ավագ մասնագետ Իֆեյինվա Օնուգանի իր հերթին նշել է, որ երեք ուղղությամբ իրականացվել է հետազոտություն՝ պարզելու, թե ճշգրիտ գիտությունների որ ուղղությամբ Հայաստանն ունի կարողություններ, որոնք կարելի է զարգացնել

եւ երկրի համար դարձնել եկամտաբեր ու արդյունավետ: Նրա խոսքով՝ Համաշխարհային բանկը պատրաստ է համապատասխան աջակցություն ցուցաբերել բարձրագույն կրթության այն ուղղությունների գծով, որոնք ազդեցություն կունենան գիտության զարգացման եւ առեստրայնացման վրա: Իֆեյինվա Օնուգանը վստահեցրել է, որ դա առաջնային մշտնապետություն ունի Համաշխարհային բանկի համար:

Հանդիպման ավարտին կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել, որ Համաշխարհային բանկը կնշակի համապատասխան առաջարկներ եւ կներկայացնի դրանք, իսկ ԿԳՄԱ Մախարաբյանը կիրականացնի Կրթության ռազմավարությանը համապատասխան առաջնահերթությունների սահմանում, որոնք կքննարկվեն հետագա հանդիպումների ընթացքում:

Հեղինակ ԳՄԱ ՄԱՆՈՒՎՅԱՆ

Մշակույթ

Բացառիկ տաղանդով եւ ինքնատիպ ձեռագրով

ՀՀ ժողովրդական նկարիչ, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը նշել է ծննդյան 70-ամյակը:

Անվանի արվեստագետի հորեղբայր Կարակոչյանը ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը շնորհավորական ուղերձ է հղել, որում, մասնավորապես, ասված է. «Արտանց շնորհավորում են Ձեզ՝ ծննդյան 70-ամյա հորեղբայր առթիվ: Դուք բացառիկ տաղանդով եւ ինքնատիպ ձեռագրով օժտված արվեստագետ եք, որի գործունեությունն ու արվեստին անմնացորդ նվիրումը բարձր գնահատանքի են արժանի: Անհնար է պատկերացնել արդի հայ կերպարվեստն առանց Ձեր ավանդի, որի ինքնատիպությունը հաստատվել է վաղուց: Ձեր արվեստն իր արժեքներովն է ստացել ոչ միայն հայրենի գեղանկարչության եւ արվեստագիտական մտքի համատեքստում, այլեւ ճանաչելի՝ միջազգային արվեստասեր հասարակության շրջանում: Մաղթում են Ձեզ անսպառ ստեղծագործական ներշնչումներ, երկար ու բեղուն տարիներ»:



մեջ անսպառ լինի», - նշել է Արա Խզմալյանը եւ հայ կերպարվեստի զարգացման, երիտասարդների մասնագիտական կրթության, գեղագիտական դաստիարակության գործում ունեցած նշանակալի ավանդի համար եւ ծննդյան 70-ամյա հորեղբայր Կարակոչյանը ՀՀ ժողովրդական նկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Արամ Իսաբեկյանին հանձնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության Ոսկե մեդալը:

ՀՀ ժողովրդական նկարիչ Արամ Իսաբեկյանի խոսքով՝ նա չի պատկերացնում իր կյանքը՝ առանց նկարելու. «Իմ արվեստը կարող ենք բաժանել մի քանի մասերի՝ մինչեւ անկախությունը, անկախության շրջան, այս վերջին տարիներին ստեղծած գործեր, որոնք ներկայացնում են մեր երկիրը իր դժբախտություններով, տիրույթային, ուրախությամբ»:

Անվանի արվեստագետը խոստովանել է, որ իր արվեստի վրա ահռելի ազդեցություն ունի այն ինտելեկտուալ պաշարը, որը ստացել է ողջ կյանքի ընթացքում կարգացած գրքերից, տեսած ֆիլմերից, լսած

երաժշտությունից, տաղանդավոր մարդկանց հետ շփումներից, ինչը չէր կարող իր հետքն չթողնել:

«Ես եղել եմ շատ զգայուն այն ամենի նկատմամբ, ինչը տեղի է ունեցել իմ շրջապատում եւ աշխարհում: Ե՛վ լավը, ե՛ւ վատը, ե՛ւ՝ ուրախությունը, եւ տխրությունը չէին կարող ինձ անտարբեր թողնել: Կարծում եմ՝ նաեւ դա է պատճառը, որ իմ տարբեր շրջանների աշխատանքներն իրենց ոճային արտահայտմամբ տարբերվում են իրարից», - եզրափակել է նկարիչը:

Ցուցահանդեսի համադրող Օսկաննա Քարամյանի խոսքով՝ Արամ Իսաբեկյանը մարդ-երեւույթ է, ուսուցիչ, վարպետ, մտածող, որ ստեղծում է կտավներ ամփոփված կարողությունների անհագ կանչով՝ իր աշխարհը նկատմամբ, իր մեկնությանը, իր իսկ աշխարհի մասին ամբողջականության ըմբռնմամբ: Իսաբեկյանը զգում է ժամանակի զարկերակը, բացահայտում է ժամանակի ընկալումն ու ասելիքը:

ԱՎԼԱ ՍԵՐՈՒՅԱՆ

«Արարատի հմայքի ներքո. գանձեր՝ հին Հայաստանից»

«Արարատի հմայքի ներքո. գանձեր հին Հայաստանից» ցուցահանդեսը հանրային քվեարկության արդյունքում ճանաչվել է Նիդերլանդների տարվա լավագույն ցուցադրությունը եւ ստացել առաջին մրցանակ:

Ցուցահանդեսը բացվել էր 2022 թ. մայիսի 10-ին Նիդերլանդների Թագավորության Ասսեն քաղաքի Դրենց թանգարանում Հայաստանի Հանրապետության եւ Նիդերլանդների Թագավորության միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հորեղբայրական միջոցառումների շրջանակում:

Նիդերլանդական «Թանգարանային ամսագրի» կողմից կազմակերպվող ամենամյա հեղինակավոր մրցանակաբաշխությունը անցկացվում է երկու փուլով՝ մասնագիտական հանձնաժողովի եւ առցանց բաց քվեարկության միջոցով: Մրցանակաբաշխությանը ներկայացված էին նաեւ Նիդերլանդների պետական թանգարանում (Rijks-Museum), Հաագայի Արվեստի թանգարանում (KunstMuseum) եւ մի շարք այլ հեղինակավոր թանգարաններում այս տարի անցկացվող ցուցահանդեսներ: Հայկական ցուցահանդեսը մասնագիտական ժյուրիի կողմից ընտրվել է լավագույն տասնյակի մեջ, ապա ստացել է հանրային քվեարկության ձայների 40%-ը, ինչն անմատչելի է մրցանակաբաշխության պատմության մեջ:



Մրցանակի հանձնման արարողությունը տեղի է ունեցել սեպտեմբերի 27-ին, Հաագայի արվեստի թանգարանում, որին մասնակցել է Նիդերլանդների Թագավորությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Բալայանը:

Նշենք, որ ցուցադրությանը ներկայացված են Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական հավաքածուից 160 արժեքավոր մնուշներ, այդ թվում՝ քարե դարյան հնագույն շրջանից մինչեւ քրիստոնեության ընդունման ժամանակահատվածին պատկանող տարբեր առարկաներ՝ խեցանոթներ, օջախներ, զենքեր, զարդեր, կոթողներ եւ այլ մշակութային արժեքներ, որոնց շարքում են Քարաշամբի հնավայրից գտնված եզակի ծիսական արծաթյա գավաթը, Արտաշես 1-ին արքայի արամեերեն արձանագրությանը սահմանադրերից մեկը, Տիգրան Մեծի դրամներից, ինչպես նաեւ թանգարանի հավաքածուից 17-րդ դարում Ամստերդամում տպագրված Աստվածաշունչը՝ որպես հայ-հոլանդական մշակութային կապերի խորհրդանիշ: Ցուցահանդեսին ներկայացված է նաեւ Նոյան Տապանի մասունքը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանից:

Ցուցահանդեսը գործելու է մինչեւ սույն քվեարկության հոկտեմբերի 30-ը:

Կ. Ս.

Սոցիալական

Ուսման վարձի փոխհատուցում

ՀՀ կառավարության որոշմամբ՝ հաստատվել են նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ուսման վարձի փոխհատուցման պայմանները:

Առաջին կուրսում նպաստի ձեռով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է.

- Պետության կողմից ուսանողական նպաստների ձեռով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում ընդունված ուսանողներին, իսկ հաջորդ ուսումնական տարվանից՝ նախորդ ուսումնական տարվա առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողին՝ փոխատուցման արդյունքում:

- Միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնական հաստատություն ընդունված «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչեւ 23 տարեկան անձանց:

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ֆունկցիոնալության ծանր եւ խոր, իսկ երեխաների դեպքում նաեւ միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց:

- «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականություն-

ները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության (ծանր եւ խոր աստիճանի ֆունկցիոնալության սահմանափակմամբ) զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող Նախկին զինծառայողների, ինչպես նաեւ զոհված զինծառայողների ծնողների, ամուսնու (կնոջ) մինչեւ 27 տարեկան զավակներին:

Պետության կողմից ուսման վճարի փոխհատուցում (լրիվ կամ մասնակի զեղչ) տրվում է՝ ըստ առաջադիմության, հետեւյալ խմբերին.

- ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին,

- սոցիալական աջակցություն ստացող սահմանված համայնքների ուսանողներին: Սոցիալական աջակցություն ստացող սահմանված համայնքների ուսանողներ են համարվում ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանված համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված ուսումնական հաստատությունների ուսանողները, ինչպես նաեւ այդ բնակավայրերում հաշվառված եւ վերջին հինգ տարում մշտապես այդտեղ բնակվող ուսանողները,

- մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին. մարտական գործողություններին մասնակցությունը զինված ուժերի կազմում հավաստող փաստաթղթի առկայության դեպքում,

- երկու եւ ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին,

- պետության համար առաջնահերթություն եւ կարեւորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուց-

մամբ ընդունված ուսանողներին: ՀՀ կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ:

Ուսման վճարի փոխհատուցման չափը որոշելիս հաշվի է առնվում ուսումնառության առաջադիմությունը՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով (առաջին կուրսում՝ նախորդ ուսումնառած կրթական ծրագրի ավարտական արդյունքներով).

- միայն «գերազանց» եւ (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում՝ ուսման վճարի փոխհատուցման չափը կազմում է 70 տոկոս,

- 75 տոկոսից ոչ պակասը՝ «գերազանց» եւ (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում՝ ուսման վճարի փոխհատուցման չափը կազմում է 50 տոկոս,

- 50 տոկոսից ոչ պակասը՝ «գերազանց» եւ (կամ) «լավ» գնահատականներ ունենալու դեպքում՝ ուսման վճարի փոխհատուցման չափը կազմում է 30 տոկոս:

«Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ ենթակետի համաձայն՝ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսուցման ծախսերը կատարվում են պետական բյուջեի հաշվին: Նշված խմբի սովորողներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ ուսումնական հաստատությունում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սոցիալական

Հանրային քննարկումներ

Տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում

2021 թվականի հունվարի 1-ից հանրակրթական դպրոցների մանկավարժներն ու սովորողներն օգտվում են 33 ԿԳՄ նախարարի հրամանով հաստատված հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցումից:

2021 թ. փոխհատուցման կարգից օգտվել են 5030 մանկավարժ և 2769 դպրոցահասակ սովորող, փոխհատուցվող տրանսպորտային ծառայությունների ծախսը կազմել է 401 մլն 578 հազար 33 դրամ: 2022 թ. մեկ կիսամյակում կարգից օգտվել են 5096 մանկավարժ և 2492 սովորող, ծախսը կազմում է 188 մլն 365 հազար 33 դրամ: Այսինքն՝ պետական աջակցության այս ծրագրից տարեկան միջին հաշվով օգտվում է շուրջ 7500 քաղաքացի:

Հիշեցնենք, որ մանկավարժների և սովորողների համար 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխություններով սահմանվել են.

- Փոխհատուցվում է սովորողների տրանսպորտային ծառայությունների ծախսը՝ անկախ հեռավորությունից, եթե աշակերտը, իր փաստացի բնակության վայրում ուսումնական հաստատության բացակայությամբ պայմանավորված կամ առկա հաստատությունում տվյալ կրթական ծրագրի բացակայությամբ պայմանավորված, ուսումը ստանում է այլ բնակավայրի կրթական հաստատությունում: Նախկինում հատուցումը տրվում էր միայն այն դեպքերում, եթե բնակավայրերի միջև հեռավորությունն առնվազն 3 կմ էր:

- Մանկավարժները (այդ թվում՝ դասավանդող նախնական զինվորական պատրաստության և անվտանգ կենսագործունեության ուսուցիչները՝ զինղեկները) փոխհատուցման կարգից կարող են օգտվել 0,5 եւ ավելի հաստիքով աշխատելու դեպքում: 0,5-ից ավելի հաստիքային դրույթի սահմանափակումը չի տարածվում 33 կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ցանկում ընդգրկված բնակավայրերի դպրոցների ուսուցիչների, ինչպես նաեւ տվյալ հաստատությունում դասավանդվող տվյալ առարկայի գծով միակ ուսուցիչը հանդիսացող ուսուցիչների վրա:

- Ամսական փոխհատուցման առավելագույն չափը յուրաքանչյուր ուսուցիչ և դպրոցահասակ երեխայի համար ավելացվել է՝ նախկին 15000-ի փոխարեն դառնալով 20200 33 դրամ:

- Միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղի լինելու դեպքում փոխհատուցման գումարը տրվում է համապատասխան երթուղիների համար սահմանված սակագների չափով: Միկրոավտոբուսային և ավտոբուսային երթուղիների բացակայության դեպքում՝ յուրաքանչյուր կմ-ի համար 25 33 դրամ՝ բայց ոչ պակաս՝ 200 33 դրամը:

- Եթե բացակայում է միկրոավտոբուսային կամ ավտոբուսային երթուղին, և տվյալ բնակավայրից տրանսպորտային փոխհատուցման ծառայություններից օգտվող երեխաների և ուսուցիչների թիվը փոքր է չորսից (այսինքն՝ ենթադրաբար, անգամ համատեղ տաքսուց օգտվելու տարբերակը արդյունավետ չի լինի), ապա այս դեպքում տրամադրվող փոխհատուցման չափը կկազմի մվագույնը 1000 33 դրամ՝ ներկա ստացած յուրաքանչյուր օրվա համար: Այս գումարը հավասար բաժանվում է բոլոր օգտվողներին:

Նշենք, որ 2022 թվականից կարգով նախատեսված փոխհատուցումները ստանում են նաեւ ուսուցիչ օգնականները և հատուկ մանկավարժները:

Կարինե ՍԱՆՈՒԿՅԱՆ

Ներկայացվել է «Բարձրագույն կրթության եւ գիտության» մասին օրենքի լրամշակված նախագիծը

33 կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Բարձրագույն կրթության եւ գիտության» մասին օրենքի լրամշակված նախագիծը: Այն երկու դրույթով ճանաչվել էր հակասահմանադրական՝ կառավարման խորհրդի ձեւավորման մասով, և վերադարձվել էր խմբագրման: Օրենքի նախագիծով կարգավորվում են 33 բարձրագույն կրթության և գիտության համակարգի գործունեության, ոլորտի կառավարման և ֆինանսատնտեսական հարաբերությունները:

Օրենքի նախագիծում սահմանվել են՝
- Բուհերին և գիտական կազմակերպություններին պետական աջակցության տրամադրման սկզբունքները և մեխանիզմները, այն է՝ ինստիտուցիոնալ (բազային) ֆինանսավորում, պետական ուսանողական կրթաթրջակների տրամադրում և մրցակցային ֆինանսավորում:

- Բուհի և գիտական կազմակերպության գործունեության թափանցիկության և հրապարակայնության համար անհրաժեշտ մեխանիզմները և պահանջները՝ ապահովելու հաստատության պատասխանատվությունը և հաշվետվողականությունը պետության ու հասարակության առջև:

Նախագիծով անհրաժեշտ հիմքեր են դրվել գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի համագործակցության և աստիճանական ինտեգրման համար՝ գիտական կազմակերպություններին ինքնուրույն գործելու, հետազոտական ցանցեր և կոնսորցիումներ ձեւավորելու կամ բուհերի կազմում որպես գիտահետազոտական ինստիտուտներ ընդգրկվելու իրավական հիմքեր ստեղծելով:

Նախագիծով նախատեսվում է ներկայիս ասպիրանտական ծրագրերը համապատասխանեցնել համաեվրոպական չափանիշներին դրանք ընդգրկելով բարձրագույն կրթության համակարգում որպես որակավորման երրորդ աստիճան՝ կրթական ծրագիր, որի ավարտին շնորհվում է դոկտորի (PhD) որակավորում: Ըստ այդմ՝ այդ մակարդակում կրթություն կարող է իրականացնել միայն բուհը՝ իր կազմում գործող մասնագիտական համապատասխան հաստատության հենքի վրա կամ իր կազմից դուրս գործող գիտական կազմակերպության հետ համատեղ:

Բարձրագույն կրթության հիմնական կրթական ծրագրերը՝ ըստ կրթական մակարդակների, կարող են իրականացվել ուսանողի լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ, այդ թվում՝ հեռավար ուսումնառությամբ ձեւերով: Սա հնարավորություն կտա ուսանողներին կարգավորելու իրենց ուսումնառության ինտենսիվությունը (բեռնվածությունը):

Երկու և ավելի բուհեր (այդ թվում՝ օտարերկրյա) կարող են համատեղ մշակել և իրականացնել կրթական ծրագիր և շնորհիվ բարձրագույն կրթության այս կամ այն մակարդակի որակավորում, որը հավաստվում է մասնակից բուհերի կողմից շնորհված միասնական ավարտական փաստաթղթով (դիպլոմով) կամ մասնակից բուհերի առանձին ավարտական փաստաթղթերով (դիպլոմներով):

Առանձին դասընթացներ կամ դասընթացների առանձին թեմաներ, ուսումնական մոդուլներ և կրթական ծրագրեր կարող են դասավանդվել օտար լեզվով, ինչը կնպաստի բարձրագույն կրթության միջազգայնացմանը:

Պետական բյուջեից ֆինանսավորվող կրթաթրջակային տեղերը բաշխվում են ոչ թե՛ ըստ բուհերի, այլ՝ ըստ ակադեմիական ոլորտների: Բուհի ընդունելության մուտքային պահանջները բավարարող և սահմանված քննական առարկաներից վկայագիր ունեցող անձինք կարող են մասնակցել բուհերի կողմից կազմակերպվող ընդունելության մրցույթին: Պետական բյուջեի ֆինանսավորմամբ մի քանի կրթական ծրագրերի կամ տարբեր բուհերի նույն ակադեմիական ոլորտի կրթական ծրագրով սովորելու իրավունք ստացած դիմորդները կարող են ընտրել մեկ բուհ (կրթական ծրագիր), որում ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն:

Կրթության որակն հավաստող մուտքային շեմն ապահովելու նպատակով, անկախ բուհերի կազմակերպարարական ձեւից և կարգավիճակից, բակալավրի որակավորման աստիճանի ցանկացած կրթական ծրագրով 33 քաղաքացիների բուհ ընդունվելու համար սահմանվում է «Հայոց լեզու» առարկայի պարտադիր քննությունը:

Կրթության որակի բարելավմանն ուղղված նախագծում սահմանվել են նոր կարգավորումներ, որոնք առնչվում են լիցենզավորման, հավատարմագրման գործընթացներին, մասնավորապես՝ սահմանվել է կրթական ծրագրերի նախահավատարմագրման պայման, որը հավաստելու է կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) համար արդյունավետ իրականացման առկա հենքը՝ որակավորումների արժանահավատ շնորհումն ապահովելու համար:

Բուհի կառավարման խորհրդի ձեւավորման սկզբունքներ, ռեկտորի ընտրություն.

Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով օրենքի նախագիծով նախատեսվում է բուհերի կառավարման խորհրդի ձեւավորման սկզբունքների փոփոխություն, անդամների թվի նվազեցում, որում որեւէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ կամ տվյալ բուհի ակադեմիական խորհրդի անդամ հանդիսացող անձանց ընդգրկելն արգելվում է: Նախագիծով կառավարման խորհրդի անդամների թիվը սահմանվել է 12, հավասար հարաբերակցությամբ՝ 6-ը բուհի ներկայացուցիչներ, իսկ մյուս 6-ը՝ լիազոր մարմնի առաջադրած ներկայացուցիչներ:

Միաժամանակ, փոփոխություն է նախատեսվել նաեւ ռեկտորի ընտրության կարգում: Նախագիծով սահմանվում է հետեւյալը. «Հանրային բուհի ռեկտորի թեկնածուներն ընտրվում են կառավարման խորհրդի կողմից՝ փակ գոտանի քվեարկության արդյունքում խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի կողմ ձայներով»: Եթե հայտարարված մրցույթի առաջին քվեարկության արդյունքում բուհի ռեկտոր չի ընտրվում, ապա մեկ թեկնածուի դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, իսկ մեկից ավելի թեկնածուների դեպքում՝ ռեկտորի բոլոր թեկնածուների մասնակցությամբ անցկացվում է երկրորդ՝ ընտրանքային կարգով վարկանիշային քվեարկություն, որում խորհրդի յուրաքանչյուր անդամ իրավունք ունի քվեարկելու մեկից ավելի թեկնածուների օգտին:

Նախատեսված քվեարկության արդյունքում խորհրդի որոշմամբ համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի ընտրությանն է առաջադրվում ընտրանքային փուլին մասնակցած և փակ գաղտնի քվեարկության արդյունքում խորհրդի

անդամների ընդհանուր թվի կեսից ավելի կողմ ձայներ ստացած մինչեւ երեք թեկնածու: Համապատասխան լիազոր մարմնի ղեկավարն այդ կազմից մեկին ընտրում է և ներկայացնում է հոգաբարձուների խորհրդի նախագահին՝ կնքելու աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Նախագծի անցումային դրույթներում սահմանվել է, որ «Կրթության մինչեւ 2030 թվականը զարգացման պետական ծրագրում» ամրագրված գործողությունների իրականացման ակնկալվող արդյունքին հասնելու համար գործող պետական բուհերի խոշորացման (այդ թվում՝ համապատասխան գիտահետազոտական կազմակերպությունների միավորմամբ) արդյունքում ստեղծվում են ըստ ուղղվածության մինչեւ 8 պետական բուհեր՝ պետական բյուջեից ֆինանսավորման ծավալների ընդլայնմամբ: Բարեփոխումների ընթացքը ապահովելու նպատակով այս բուհերում լիազոր մարմնի ղեկավարը մինչեւ հինգ տարի ժամկետով նշանակում է ժամանակավոր կառավարիչ-ռեկտորներ և ձեւավորում 12 անդամից կազմված կառավարման ժամանակավոր խորհուրդներ՝ նշանակելով խորհրդի նախագահներ: Այս կարգով նշանակվող կառավարիչ-ռեկտորի և կառավարման խորհրդի նկատմամբ չեն կիրառվելու օրենքի նախագիծում ռեկտորին և խորհրդի անդամներին ներկայացվող պահանջները: Ժամանակավոր կառավարիչ-ռեկտորների և խորհուրդների լիազորությունների շրջանակը սահմանվում է Կառավարությունը՝ նախատեսելով վերահսկողության մեխանիզմներ՝ ուղղված բուհի զարգացման ծրագրի և պետական ռազմավարության իրականացման ապահովմանը՝ լիազոր մարմնի ղեկավարին հնարավորություն ընձեռելով վերանշանակելու ժամանակավոր կառավարիչ-ռեկտորներին և խորհուրդների անդամներին:

Նախագիծում ոչ պետական (մասնավոր) բուհերի համար եւս սահմանվել է ոչ առելուարյին կազմակերպական-իրավական ձեւ. մասնավոր բուհերի նկատմամբ մինչեւ 2030 թվականի հուլիսի 1-ը կշարունակվեն կիրառվել տվյալ կազմակերպական-իրավական ձեւի իրավաբանական անձի գործունեությունը կարգավորող օրենքներով և մասնավոր բուհերի կանոնադրությամբ սահմանված նորմերը:

33 գիտությունների ազգային ակադեմիա.

Թեեւ նախագիծով ուժը կորցրած է ճանաչվում «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքը, սակայն ակադեմիան պահպանում է իր կարգավիճակը, որն իր կազմում միավորում է ակադեմիայի անդամներին, բաժանմունքները, աշխատակազմը և համակարգի կազմակերպությունները: Ակադեմիայի գործառույթներից են՝ գիտության զարգացման և գիտական ու գիտատեխնիկական գործունեության արդյունքների ներդրման, ինչպես նաեւ պետության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման ուղղությամբ համապատասխան ոլորտի պետական քաղաքականություն մշակող և իրականացնող մարմիններին օրենքներով և ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնագիտական և փորձագիտական խորհրդատվության տրամադրումը: Նախագիծով ընդլայնվում են նաեւ Գիտության կոմիտեի լիազորությունները:

Հեղինակ՝ ՀՈՒԿՆԵՆԻՍՅԱՆ



Մասնագիտական կրթություն եւ ուսուցում

Սահմանամերձ

Թափուր տեղերը զգալի նվազել են

Առկա է 220 թափուր տեղ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության վարչությունն ամփոփել է քոլեջների եւ ուսումնարանների 2022-2023 ուսումնական տարվա ընդունելության արդյունքները:



Ըստ այդմ անվճար եւ վճարովի տեղերը բաշխվել են հետևյալ կերպ.

- Միջին մասնագիտական կրթական ծրագրերով հատկացվել է 10.133 տեղ, որոնցից 5605-ը անվճար, 4528-ը՝ վճարովի ուսուցմամբ: Նախորդ տարվա համեմատ (2021-22 ուստարում հատկացվել էր 9501 տեղ) միջին մասնագիտական կրթական ծրագրերով հատկացված անվճար ուսուցմամբ տեղերի թիվն ավելացել է շուրջ 500-ով:

- Հիմնական կրթության հիմքով քոլեջներին հատկացվել է 8999, իսկ միջնակարգ կրթությանը՝ 1134 տեղ: ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններ քոլեջներ են ընդունվել 146 առաջին կուրսեցիներ, փորձարարական ծրագրերով՝ նոր ներդրված մասնագիտություններով 166 սովորող: Միջին մասնագիտական կրթական ծրագրերով թափուր են մնացել 479 անվճար տեղեր՝ նախորդ տարվա 498-ի համեմատ:

-Նախնական արհեստագործական կրթական ծրագրով հատկացված 3077 տեղերից 2606-ը տրվել է պետական պատվերի շրջանակում, 333 տեղ՝ վճարովի ուսուցմամբ:

Նախորդ 2021-2022 ուսումնական տարվա արհեստագործական կրթական ծրագրերով հատկացված տեղերի ընդհանուր թիվը (3109 տեղ) գրեթե չի փոխվել, իսկ պետական պատվերով հատկացված տեղերը ունեն են մնացել: Հիմնական կրթության հիմքով այս տարի արհեստագործական ծրագրերով առաջին կուրս է ընդունվել 2202, միջնակարգ կրթության հիմքով՝ 595 ուսանող: Փորձարարական ծրագրերով նոր ներդրված մասնագիտություններով կրթություն է ստանում 143 ուսանող, եւս 28 սովորող ընդունվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությամբ: Անվճար ուսուցմամբ, թափուր են մնացել 384 անվճար տեղեր, այն դեպքում, երբ նախորդ ուսումնական տարում թափուր էր մնացել 706 անվճար տեղ:

Որպես ընդհանուր միտում համակարգում թափուր տեղերի թիվը զգալիորեն կրճատվել է, ինչն ակնառու է հատկապես արհեստագործական մասնագիտությունների դեպքում: ԿԳՄՍ նախարարության նախնական արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետի պարտականությունները կատարող Արմենուհի Պողոսյանի տեղեկացմամբ՝ ընդունելության շրջանում հատկապես մի շարք մասնագիտությունների համար շատ բարձր մրցակցություն է եղել: Դիտարկելով դիմորդների կողմից նախընտրելի մասնագիտությունների ցանկը՝ վարչության պատասխանուն արձանագրում է. «Դիմորդները հաճախ մասնագիտության ընտրությունը կատարում են ոչ թե հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները, կամ փաստահենք տվյալների վրա բացահայտված կարիքները, այլ ավելի շատ վերջին տարիներին ձեւավորված ընդհանուր տեղեկանքները: Թերեւս բացառությամբ ՏՏ ոլորտի մասնագիտությունների, որոնք մեծ թվով դիմորդներ են ունեցել, առավել բարձր դիմելիություն ունեցող միջին մասնագիտական կրթությամբ մյուս մասնագիտությունները միշտ չէ, որ աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեն»,- նշում է Արմենուհի Պողոսյանը:

Նրա խոսքով՝ ՀՀ կառավարության

կողմից միջին մասնագիտական կրթական ծրագրով զերակա են համարվում գյուղատնտեսության, զբոսաշրջության, տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտները: Իսկ նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով Կառավարությունը գերակա է համարում արվեստի, գյուղատնտեսության, արդյունաբերության եւ արտադրության ոլորտները:

«Հաշվի առնելով վերոնշյալ ոլորտները եւ ուսումնական հաստատությունների համապատասխան մասնագիտությունների գծով գործունեության թուլությունը (լիզենզիա) սահմանային տեղերի թիվը՝ հատկացվում են ընդունելության տեղերը: Դիմորդների մասնագիտության ընտրության միտումները թեեւ տարեցտարի փոխվում են, բայց են այնպես, նրանց մասնագիտական կողմնորոշումը դեռեւս պետական առաջնահերթությունների հետ ամբողջությամբ համահունչ չեն»,- նշում է վարչության պատասխանատունը:

Այսպես՝ վերջին տարիների ընթացքում դիմորդների կողմից շարունակվում են պահանջված մնալ միջին մասնագիտական կրթական ծրագրով տնտեսագիտական ուղղվածության մասնագիտությունները (մասնավորապես՝ «Բանկային գործ», «Հաշվապահական հաշվառում», «Ֆինանսներ» եւ այլն): Դիմորդներն ավանդաբար շատ են լինում նաեւ ՏՏ ոլորտի մասնագիտություններով (մասնավորապես՝ «Հաշվողական մեթոդներ, համալիրներ, համակարգեր եւ համակարգչային ցանցեր» «Հաշվողական տեխնոլոգիաներ» եւ այլն): «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում եւ զբոսաշրջային համալիրներում» եւ այլն, առողջապահական ոլորտի մասնագիտությունները, մասնավորապես «Քուրսական գործ», «Ղեկավարություն» եւ «Ատանձատեխնիկական գործ»:

Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով առավել պահանջված են «Խոհարարական գործ», «Ոսկերչություն», «Վարսավիրական արվեստ եւ զարդային դիմահարդարում», «Համակարգիչների շահագործում», «Տրանսպորտային միջոցների շահագործում եւ նորոգում» մասնագիտությունները:

«Երբեմն դիմորդներն ընտրում են այս կամ այն մասնագիտությունը՝ հստակ չպատկերացնելով, թե այդ մասնագիտության համար ինչպիսի գիտելիք եւ հմտություն է պահանջվում իրենցից: Օրինակ՝ շատերն են այսօր ուզում ՏՏ մասնագետ դառնալ, բայց լինում են դեպքեր, երբ ընդունվելուց եւ որոշ ժամանակ ՄԿՈՒ հաստատություն հաճախելուց հետո սովորողը հասկանում է, որ ՏՏ

ոլորտը իր տեղը չէ, որովհետեւ ինքը չունի համապատասխան տվյալներ, ինքը պատրաստ չէ այդ մասնագիտության համար պահանջվող գիտելիքները ձեռք բերել: Այս իմաստով մասնագիտական կողմնորոշման ակունքների եւ կարիերայի ուղղորդման կենտրոնների գործունեությունը շատ կարեւոր են: Թեեւ կարիերայի ուղղորդման կենտրոններ ներդրված են բոլոր ՄԿՈՒ հաստատություններում, սակայն դրանք կարող են լիարժեք եւ արդյունավետ գործել միայն համակարգչային հետ համագործակցությամբ:

Մի բան է ներդնել կարիերայի կենտրոններ, մեկ այլ բան՝ դրանք աշխատեցնել որպես համակարգ եւ ունենալ արդյունք: Սա նոր համակարգ է, եւս ըստ էության չի կարող միանգամից աշխատել եւ լիարժեք արդյունք ապահովել: Ի վերջո, այդ նույն կարիերայի ուղղորդման կենտրոնները եւս կարիք ունեն գիտելիքների, թե այսօր աշխատաշուկայում նոր մասնագիտությունների ստեղծման ինչպիսի միտումներ կան: Այս խնդիրները հաշվի առնելով՝ մենք անընդհատ շարունակական վերապատրաստումներ ենք իրականացնում կարիերայի ուղղորդման կենտրոնների համար: Նույն գործընթացը պետք է զուգահեռաբար ընթանա նաեւ հանրակրթության համակարգում հիմնական դպրոցում, որտեղ դրվում է մասնագիտական կողմնորոշման հիմքը»,- նշում է Արմենուհի Պողոսյանը:

Նրա խոսքով՝ շատ կարեւոր է երեխաներին ճիշտ ներկայացնել մասնագիտությունը: Մասնագիտական կողմնորոշման եւ ուղղորդման մեթոդական կենտրոնը հստակ սահմանել է կարիերայի ուղղորդման կենտրոնների գործառնությունները (սովորողների հետ տարվող աշխատանքներ, կարիերայի կառավարման հմտություններ, միջանձնային հարաբերություններ եւ այլն):

Տեխնոլոգիաների մուտքը մասնագիտական ոլորտներ շրջադարձային փոփոխությունների է հանգեցրել: Ի վերջո, գյուղատնտեսությամբ զբաղվելը վաղուց այլեւս չի նույնացվում բաժնի հող փորելու կամ գութանով հերկելու հետ: Աշխարհն այսօր խոսում է խելացի գյուղատնտեսության մասին, սակայն երեխան դեռեւս չի պատկերացնում, թե դա իրականում ինչ է նշանակում, անկախ հանգամանքից, որ կառավարությունը ագրոմասնագիտությունները հռչակել է գերակա:

Ըստ Ա. Պողոսյանի՝ ԿԳՄՍ նախարարության պատվերով այժմ Եվրոպական կրթական հիմնադրամը իրականացնում է հետազոտություն պարզելու համար, թե շինարարության եւ հարակից ոլորտներում ինչ մասնագիտությունների պահանջարկ կա: Այսօր շինարարությունը մեր երկրում առաջատար ճյուղ է համարվում: Բացի մասնավոր կառուցապատման ծրագրերից կառավարության կողմից եւս պետական միջոցներով շինարարական մեծ ծրագրեր են իրականացվում, մասնավորապես՝ կրթական հաստատություններ են կառուցվում եւ հիմնանորոգվում: Ըստ կառավարության ծրագրի՝ մինչեւ 2026 թվականը պետք է կառուցվի, նորոգվի եւ հիմնանորոգվի 300 դպրոց, 500 նախակրթարան: Շինարարության ոլորտում որակավորված մասնագիտական աշխատուժի պահանջարկ կա: Այստեղ առաջնային է նաեւ աշխատանքային անվտանգության հարցը, որը որակավորված աշխատուժի բացակայության պայմաններում անհնար է ապահովել:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սահմանամերձ բնակավայրերում մանկավարժների բացը լրացնելու համար՝ դեռեւս 2021 թ. հունվարից ուժի մեջ է մտել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանը, որով սահմանվել է սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական ուսումնական հաստատություններ մասնագետների գործունեության վերաբերյալ կարգը:

Այդ նպատակով ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը գործարկել է բարձրլեռնային եւ սահմանամերձ համայնքներ ուսուցիչների գործունեության էլեկտրոնային համակարգը <https://kadrer.emis.am> :

Էլեկտրոնային համակարգում մարզպետարանները ներկայացնում են իրենց մարզում առկա մանկավարժների պահանջարկը: Շտեմարանում այս պահին գրանցված է ՀՀ բարձրլեռնային եւ սահմանամերձ բնակավայրերի հանրակրթական դպրոցներում առկա 220 ուսուցիչ թափուր տեղ: Առցանց հարթակում նշված են մարզը, բնակավայրը, դպրոցը, առարկայի անվանումը, թափուր ժամերի քանակը եւ դրան համապատասխան վարձատրության չափը, ուսումնական հաստատության հետ կապ հաստատելու կոնտակտային տվյալները եւ այլն:

Սահմանամերձ բնակավայրերում աշխատելու ցանկություն ունեցող մասնագետները, որոնք բավարարում են ուսուցչի որակավորման սահմանված չափանիշներին, կարող են առցանց գրանցվել՝ նշելով նախընտրելի դպրոցը եւ մասնագիտությունը:

Գործուղվող ուսուցիչներին պետությունը սոցիալական երաշխիքներ է առաջարկում՝ պայմանների բարելավմամբ:

Ներկայում ՀՀ սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի դպրոցներում աշխատում են գործուղված 15 ուսուցիչներ:

Գործուղված մասնագետներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին տվյալ ուսումնական հաստատությունը լրացուցիչ հատկացնում է.

- իր եւ իր ընտանիքի անդամների տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ միայն միկրոավտոբուսային երթուղի լինելու դեպքում՝ միկրոավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով, իսկ միկրոավտոբուսային եւ ավտոբուսային երթուղիների համար սահմանված սակագնի չափով: Բնակավայրի համար երթուղու բացակայության դեպքում հիմք է ընդունվում ամենամոտ բնակավայրի համար սահմանված սակագինը:

- իր եւ իր ընտանիքի անդամների անհրաժեշտ գույքի տեղափոխման տրանսպորտային ծախսերը՝ մինչեւ 50 կիլոմետր ճանապարհի համար՝ 10.000 դրամ, 50 կիլոմետրից ավելի յուրաքանչյուր մինչեւ 50 կիլոմետրի համար՝ 8.000 դրամ, բայց ոչ ավելի, քան 50.000 դրամը,

- տարեկան 4 անգամ նշտական բնակավայր այցելելու համար տրանսպորտային ծախս,

- բնակարանային վարձ ըստ մարզերի՝ 10-24 հազար ՀՀ դրամ գյուղական եւ 13-34 հազար ՀՀ դրամ քաղաքային բնակավայրային համար,

- կոմունալ ծախսերի համար՝ ամսական 10.200 ՀՀ դրամ,

- աշխատավարձի հավելում՝ աշխատավարձի 30 տոկոսի չափով:

Վերոնշյալ հատկացումները տրամադրվում են մարզպետարանների (նախարարության ենթակայությամբ գործող հաստատության դեպքում՝ նախարարության) կողմից՝ եռամսյակային կտրվածքով:

Գործուղված մասնագետը չի կարող միեւնույն հաստատություն գործուղվել երկու անգամից ավելի : Նրա հետ աշխատանքային պայմանագիր է կնքվում առավելագույնը երկու տարով:

Նշենք նաեւ, որ գործուղված մասնագետները կարող են միաժամանակ օգտվել հանրակրթական դպրոցների մանկավարժներին եւ դպրոցա-հասակ երեխաներին տրանսպորտային ծախսային կենտրոնի դիմաց փոխհատուցման կարգից՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ մարզերի հանրակրթական այլ դպրոցներում աշխատանքային պայմանագրեր կնքելու դեպքում:

Կ. Մ.

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երեւանի Ս. Խանգաղյանի անվան հ. 184 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (25 դասաժամ), ֆիզիկոլոգիայի (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գործույթի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- իրատարակված հողվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են բերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 31-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ ԿԳՄՍՆ Երեւանի Ս. Խանգաղյանի անվան հ. 184 ավագ դպրոցում, հասցեն՝ ք. Երեւան, Գուսան Շերամի 103/3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 72-73-30 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի հ. 5 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (17 դասաժամ), մաթեմատիկայի (29.75 դասաժամ), հայոց լեզվի եւ գրականության (7.75 դասաժամ), ֆիզիկայի (8.5 դասաժամ), տեխնոլոգիայի (8 դասաժամ), կերպարվեստի (7.75 դասաժամ), երաժշտության (7 դասաժամ), աշխարհագրության (6 դասաժամ), ֆիզիկոլոգիայի (21.25 դասաժամ), ռուսաց լեզվի (22 դասաժամ), հասարակագիտության (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գործույթի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,

- իրատարակված հողվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են բերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են հոկտեմբերի 12-ից մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա նոյեմբերի 1-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի հ. 5 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Քաջարան, գ. Բաբիկավան 3/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 6-12-87, (077) 58-28-54 հեռախոսահամարներով:

Ֆերմիի պարադոքսը. ինչո՞ւ է լռում Տիեզերքը

Աստղագիտության օր

Սեպտեմբերի 18-ին Վ. Համբարձումյանի ծննդյան օրը, Շիրակի մարզի Նոր Կյանքի միջնակարգ դպրոցում ավանդաբար նշվում է Աստղագիտության օրը: Դա հայ հանճարների միջոցով Տիեզերքի հետ խոսելու մի առիթ է, երբ որեւէ աստղագիտական առեղծվածային խնդրի անդրադառնալուց զատ՝ մեծարվում են ներկայացվում է որեւէ հայ գիտնականի արած գործը Տիեզերքի ուսումնասիրության ասպարեզում:

Այս տարվա թեման էր՝ «Ֆերմիի պարադոքսը. ինչո՞ւ է լռում Տիեզերքը»:

Ցանկացած քաղաքակրթություն, որը հասել է այնպիսի տեխնոլոգիական մակարդակի, որ նրա համար իրականալի են միջաստղային թռիչքները, պետք է նկատելի դառնա աստղաֆիզիկոսների: Բայց Տիեզերքի «լռությունը», որն ընկած է Ֆերմիի պարադոքսի հիմքում, ակնարկում է այն մասին, որ Արեգակնային համակարգի մոտակայքում զարգացած քաղաքակրթությունները չկան: Առայժմ մարդկությունը չի գտել ոչ մի նշանակալից նշան այն բանի, որ մենք միայնակ չենք ծիր Կաթինում:

Գիտնականները փնտրում են քաղաքակրթություններ, որոնք պոտենցիալ կարող են մեզ հետ կոնտակտի մեջ գտնվել, իսկ դա նշանակում է, որ նրանք պետք է թողնեն տեխնոսիգնատուրա՝ տեխնոլոգիաների առկայության նշաններ, որոնք տեսանելի են մեծ հեռավորությունից եւ հնարավոր չէ քայքայել: Ընդ որում, երբ խոսում ենք կոնտակտի մասին, դա անպայման չի նշանակում անմիջական շփումը, այլ նաեւ՝ աստղագիտական դիտումներով քաղաքակրթական օջախի հայտնաբերումը:

Պետք է հասկանալ՝ ում հետ հանդիպելու հավանականությունն է ավելի մեծ՝ մեզ հետ զարգացման միեւնոյն մակարդակի վրա գտնվող քաղաքակրթությունների՝ թե՛ մեզ մեծապես իրենց հնարավորություններով գերազանցողների (հետեւաբար՝ նաեւ՝ ավելի ծեր, զարգացման երկար ճանապարհ անցածների) հետ: Շփման հավանականությունը համեմատական է քաղաքակրթության հասակին, հետեւաբար՝ երիտասարդ քաղաքակրթությունները փնտրելը, եթե նույնիսկ դրանք անհամեմատ շատ են, գրեթե անիմաստ է: Գիտնականները համոզված են, որ զարգացած քաղաքակրթությունների տեխնոսիգնատուրան պետք է որ ունենա հազարավոր, նույնիսկ՝ միլիոնավոր տարվա պատմություն: Գերզարգացած տիպի համար նկատելի են ունենում միլիարդ տարին: Չի բացառվում, որ նույնիսկ անհնագազարգացած քաղաքակրթությունը կանհետանա, ինչպես օրինակ՝ Երկրի վրա անհետացավ հինգերորդ դարից սկսած, որ կառուցել է Մեծ բուրգերը: Բայց այնուհարակայինները կարող են թողնել միջաստղային փարոսներ կամ արձակել զոնդեր, որոնք կշարունակեն իրենց թափառումները Տիեզերքում: Նման զոնդերը ենթադրաբար կարող են ունակ լինել ռեպլիկացիաների, այսինքն՝ իրենց պատճենները ստեղծելուն, եւ կարող են տարածվել ողջ Գալակտիկայում:

Մի նրբություն. ամենաերկարակյաց տեխնոսիգնատուրաներ պարտադիր չէ, որ ունենան ամենաբարձր զարգացման աստիճանի հասած քաղաքակրթությունները: Օրինակ՝ բանական արարածները, որ դեռ նոր են տիեզերական թռիչքների դուրս գալիս, կարող են թողնել տիեզերական աղբ, կեղտոտ են մթնոլորտը, օգտագործեն ռեակտիվ քիմիական շարժիչներ:

Շատ հնարավոր է, որ առաջինը հայտնաբերենք այնպիսի զարգացման շատ բարձր աստիճանի հասած, միլիարդ տարի գոյատևած քաղաքակրթության սիգնատուրա, որն այլևս չկա: Նշանակում է, այնուհարակայինների հետ կոնտակտը ավելի շատ կարող է հիշեցնել հնէաբանություն, որտեղ հիմնական գործիքը աստղագիտական է, որ փնտրում է արդեն հանգած քաղաքակրթության գործունեության հետքեր: Գուցե մենք կգտնենք զարգացած արհեստական բանականություններ, որ թողել են արդեն մահացած քաղաքակրթություններն իրենց տեսիլից, ընդ որում՝ այդ արհեստական բանականությունները ինքնավերարտադրող են: Դրանց ավելի հեշտ հնարավոր կլինի հայտնաբերել իրենց երկարակյացության պատճառով:

Պետք է հասկանալ, որ հազարավոր տարիներ գոյություն ունեցող քաղաքակրթությունը չի թողնի այնպիսի տեխնոսիգնատուրա, որը կսահմանափակեր իրենց իսկ կյանքի ժամանակը (օրինակ՝ վտանգավոր թափոններ, կլիմայի փոփոխություններ): Նրանց իրենց մոլորակների սահմաններից դուրս գալու են այլ մարմիններ գաղութացնելը՝ միլիոնավոր բնակիչներով, կլիմայի զարգացման տրամաբանական փուլ: Այդ պատճառով էլ բավական մեծ հավանականություն կա, որ մարդկությունը կոնտակտի մեջ մտնի դեռ ապրող քաղաքակրթության հետ, որ հաղթահարել է առեղծված փակություններ ու հասել տեխնոլոգիական անհավանական թվացող մակարդակի:

Տիեզերքում լուսային «փարոսներ» փնտրելը, որոնք լավ տեսանելի են, բայց պրակտիկորեն անօգուտ, պարապ զբաղմունք է թվում: Ավելի շուտ այնուհարակայինները միմյանց կուղարկեն նեղ ուղղորդված ազդանշաններ, որոնք դժվար թե հնարավոր է պատահականորեն որսալ, եթե միայն չեն ուղղված ուղիղ դեպի Երկիր: Այնուհարակայինները դիտմամբ կարող են ընտրել այնպիսի ազդանշաններ (դրանց քվանտային կոմունիկացիաներ են անվանում), որոնք ընդունումը մատչելի չլինի թույլ զարգացածների համար, այսինքն ունենան կապի թաքնված ուղիներ, որոնցում պարունակվող ինֆորմացիան պաշտպանված է «լուսններից»: Այսպիսով քվանտային ազդանշաններ որոնելը դառնում է այնուհարակայինների փնտրման ապագայի գերխնդիր:

Շատ նշանավոր գիտնականներ (Ս. Յոքիմովիչ, Միչիո Կակու) համոզված են, որ Երկիրը պետք է ստվերում մնա, թույլ չտա իրեն հայտնաբերել, քանի որ զարգացած քաղաքակրթություններից սպասվող վտանգի աստիճանը (ռիսկը) շատ մեծ է: Ոչ ոք չգիտի, թե ինչ սոցիալական, տնտեսական ու էկոլոգիաներից հետեւանքներ կարող է ունենալ մեզ համար զարգացած քաղաքակրթության հետ հանդիպումը: Հայտնի չէ, ինչ հետեւանք կարող են ունենալ այլոց տեխնիկաները (օրինակ՝ բազմազոն արհեստական բանականություններ):

Փիլիսոփա Նիք Բոստրոմը կարծում է, որ եթե ստեղծվի մեքենայական գերինտելեկտ, որն ամեն ինչով գերազանցի մարդկային ուղեղը, ապա դա կարող է սկզբունքորեն անորոշ վտանգներ ստեղծել, մարդը չի կարող այն վերահսկել: Չարագացած քաղաքակրթությունները պետք է որ այդ փուլն անցած լինեն, ինչը ենթադրում է, որ ցանկացած իրն ու զարգա-



ցած քաղաքակրթություն, որի հետ մարդկությունը ավելի հավանական է, որ հանդիպի, իրականում կկառավարվի արհեստական բանականության կողմից կամ նույնիսկ ամբողջությամբ բաղկացած կլիմայի ռեֆորմներից:



Հայտնի աստղագետ Ֆրեդ Դոյլը իր «Անդրմուտեղ» գիտաֆանտաստիկ վեպում նկարագրում է սցենար, որում վտանգավոր է նույնիսկ մեզ հասկանալի ռադիոազդանշանը, որում կողմավորված վնասակար տեղեկատվություն կա կամ թշնամաբար տրամադրված համակարգերի ստեղծման ուղեցույցներ:

Կոլոբվիումի ընթացքում աշակերտները եւ բանախոսը դպրոցի տնօրեն Ջավեն Պետրոսյանը, անդրադարձան նաեւ «հայկական» թեմաների ու հայ գիտնականների աշխատանքներին հիշյալ բնագավառում: Ի մասնավորի, խոսվեց Թաթևտա Բոյաջյանի աստղի մասին, որի շուրջը, ենթադրաբար, կա վարկածային աստղաինժեներական ոլորտ՝ տիեզերական էներգոկայան: Ներկայացվեցին Արարատ Եղիկյանի, Արեգ Միքայելյանի աշխատանքները: «Արդյո՞ք Տիեզերքը միշտ է եղել բարենպաստ՝ կյանքի առաջացման համար», «Արտերկրային քաղաքակրթությունների հիմնախնդիրը եւ արտասարեզակնային մոլորակները»:

Միջոցառման հյուրերն էին ԿՁՆԱԿ-ի բազմամարդ պատվիրակությունը՝ զարգացման վարչության պետ Լիլիթ Մկրտչյանը, ֆիզիկայի, մաթեմատիկայի մասնագետներ: Նրանք եւս մասնակից եղան քննարկումների, իրենց հարցերն առաջադրեցին աշակերտներին: Նաեւ առաջարկ ներկայացրին Շիրակի մարզի Նոր Կյանքի դպրոցի ավանդական մաթեմատիկոսները այսուհետ հանրապետական միջոցառման վերածել, մեծացնելով ընդգրկվածությունը եւ փնտրելով նոր ֆորմատներ:

Վերջում բոլորը այցելեցին Նոր Կյանքի 6-7-րդ դարերի հայկական ուշագրավ եկեղեցի: Դա ժամանակների կապն էր՝ հին-հին դարերից մինչեւ մերօրյա ամենաթնջուկային բնագիտական պրոբլեմներից մեկը...

Ձառուկի ՊԵՏՐՈՍՅԱՆ





Գրախոսություն

Բանասիրական ընդգծված արժեք

Հայերենի պատմության նախընթաց շրջանների մատենագրական հուշարձանների լեզվական աստղծի քննությունը որոշակի գաղափար է տալիս լեզվական տվյալ գոյափոխության, լեզվի կառուցվածքային մակարդակների, մակարդակային միավորների համակարգային կապերի, ինչպես նաև լեզվի գործառնական հնարավորությունների մասին. այդ կարգի ուսումնասիրությունը կարող է ամբողջացնել լեզվի տվյալ գոյափոխության տիպաբանական բնութագիրը՝ լեզվի պատմության համատեքստում:

Այդ կարգի աշխատանք է հրատարակել բան. գիտ. թեկնածու Լիլիթ Խաչատրյանը՝ հրապարակ իջեցնելով «Ղեւնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի լեզուն» թեմայով մենագրությունը:

Լիլիթ Խաչատրյանը 2002-ից բնակվում է ԱՄՆ-ում, Աշխատում է Լոս Անջելեսի Համագրային Արեւմտյան շրջանի գրական միավորումում որպես գրաբարի դասախոս:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Համագրային Արեւմտյան շրջանի գրական միավորումում սովորող ուսանողները ամերիկյան եւ եվրոպական համալսարաններն ավարտած մասնագետներ են եւ քաջ տիրապետում են մի շարք հին եւ նոր լեզուների ու նրանց պատմությանը՝ նրանք մասնագետի առաջ խնդիր են դնում հաղորդելու հին հայերենի ենթափոխների վերաբերյալ համակողմանի եւ խորը գիտելիքներ ու դրանք մեկնաբանել ըստ պատմիչների երկերի լեզվական նյութերի:


Ձեռնարկելով սույն մենագրությունը՝ հեղինակը մասնակիորեն լրացնում է ութերորդ դարի հայերենի վերաբերյալ մասնագիտական գրականության պակասը եւ ուսանողների ու մասնագետների ուշադրությանն է հանձնում այս աշխատանքը:

Աշխատանքում քննության են ենթարկվում VIII դարի պատմիչ Ղեւնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի լեզվական իրականությունները, բացահայտվում են հնչյունական, բառիմաստային, ձևաբանական եւ շարահյուսական մակարդակների առանձնահատկությունները՝ համաժամանակյա կտրվածքով:

Մենագրության հեղինակը Ղեւնդի երկի հնչյունական իրողությունների քննությամբ վեր է հանում դասական հայերենի հնչյունական համակարգի փոփոխությունների միտումները՝ փոխառում լեզվի (արաբերեն) ձայնեղների դիմաց պարզ խոսք բաղադրանքների գործածում, փակ վանկուն երկբարբառների պարզեցում՝ անկախ շեշտից, որոշ ձայնավորների փոխարեն երկբարբառների գոյություն, ոչ կայուն հնչյունափոխությամբ պայմանավորված հոլովական հիմքերի գուգածությունն է այլն:

Ըստ հետազոտողի՝ «Պատմութիւն» երկի բառապաշարը, որի ակունքները հայերենի ընդհանուր գրական եւ ժամանակի խոսակցական տարբերակներն են, բովանդակության առումով հարուստ է եւ բաշխվում է գործառնական եւ ձևաբանական տարբեր խմբերի մեջ, որոնք ունեն ռճակաւ արժեք են համարվում են Ղեւնդի խոսքի անհատականացման միջոցներից:

Լ.Խաչատրյանը բացահայտել է «Պատմութիւն» երկի հեղինակային նորակազմությունները՝ բարդ եւ ածանցավոր բառեր, որոնք հասնում են շուրջ յոթասուսուհի: Դրանցից են՝ ազգաբան (52), ակնայութիւն (122), այլիմաց (50), անխոհականապէս (85), անձնիշխանա-



բար (44), անճաշութիւն (107), անտարագրելի (97), արարաբար (92), արդիւնաւորութիւն (121), արուեստաւորիչ (66), բազմախնամ (107), բացահոսումն (87), գաղտաստյոյր (33), գինեզեղութիւն (115), գրաւաստակ (128), ընդոստախաւս (133), թափանցական (153), ժամատաբարոյ (66), իւրեանցական (35), հաւատաւաճառ (47), հրագագաթն (161), մեքենայոյզ (139), նախատորոյի (107), չարագործող (53), չարընկալ (128), սրատեսաւղ (59) եւ այլն:

Լ. Խաչատրյանը Ղեւնդի երկի բառային փոխառությունները ժամանակագրորեն բաժանում է երկու շերտի՝ հին փոխառություններ (որոնք հայերենի բառային կազմ են թափանցել լեզվի զարգացման նախորդ գոյափոխություններում եւ հայ մատենագրության մեջ գործածվել են տարբեր հաճախականությամբ) եւ նոր փոխառություններ (որոնք հայերենին են անցել նույնպես տարբեր ժամանակներում, սակայն հայ մատենագրության մեջ առաջինը Ղեւնդի երկում են հանդիպում):

Հետազոտողը վեր է հանել Ղեւնդի երկում հանդիպող բառերի իմաստային նոր կիրառություններ, որոնք որոշակի արժեք են ներկայացնում պատմական իմաստաբանության առումով. կան բառիմաստներ, որոնք պայմանավորված են հեղինակային նորակազմություններով եւ, բնականաբար, չկային դասական հայերենում, կան նաև բառիմաստներ, որոնք դասական շրջանի համեմատությամբ կրել են տարաբնույթ փոփոխություններ. որոշ բառեր, պահպանելով նախնական նշանակություն(ներ)ը, ձեռք են բերել նաև նոր իմաստ(ներ) կամ էլ զրկվելով դասական շրջանի բառիմաստներից՝ անցել են նոր նշանակության:

Աշխատանքում որոշակի արժեք են ներկայացնում Ղեւնդի երկի դարձվածքների քննությունը. այս մարզում վեր են հանում հին հայերենի կայուն բառակապակցությունների ձևաբանական-կառուցվածքային յուրահատկություններն ընդհանրապես, նախամիջին ենթաշրջանից՝ մասնավորապես:

Ձեւաբանական համակարգի յուրահատկությունները ներկայացնում է երկու կտրվածքով: Նյութական խոսքի մասերի համակար-

գում բացահայտում է գոյականի հոլովական գուգածությունները, ածականի բաղդատական աստիճանի կազմության տարբերակները, կատարում է ցուցական դերանվան կարճ եւ երկար ձևերի գործառնական վիճակագրություն՝ ցույց տալով կարճ ձևերի գործառնական հաճախականությունը: Բացահայտում է բայի խոնարհման տիպերի եւ լծորդությունների փոխանցումները, ներգործածել եւ կրավորածել խոնարհման խաչաձեւումները եւ այլն: Սպասարկու խոսքի մասերի համակարգում ուսումնասիրում է նախդիրների եւ դերանվանական հոդերի գործառնական արժեքը, վերլուծում է աննախդիր եւ կրկնակի նախդիրներով կառույցները, հոդերի ռճական եւ քերականական արժեքները:

Հետազոտության հեղինակը եզրակացնում է, որ Ղեւնդի երկում լեզվի ձևաբանական մակարդակի եւ նրա միավորների կրած փոփոխությունները համակարգային տեղաշարժերի դրսեւորումներ են, որոնք կարելու չափորոշիչներ են համարվում լեզվի ձևաբանական տիպաբանության բնութագիրը որոշելու հարցում:

Շարահյուսական համակարգի յուրահատկությունները վերաբերում են թեք հոլովով ենթակայի արտահայտությանը, լրացում-լրացյալի անհամաձայնության դեպքերին, բայի ժամանակային ձևերի երկրորդային կիրառություններին, շարադասական փոփոխություններին, անվանական եւ դերբայական անդեմ ստորոգմամբ նախադասությունների բազմազանությամբ եւ այլն:

Լիլիթ Խաչատրյանը փաստական նյութի քննությունից եզրակացնում է, որ Ղեւնդի երկի լեզվի քերականական համակարգի յուրահատկությունները կարող են որոշակի պատկերացում տալ հայերենի զարգացման նախամիջին ենթաշրջանի վերաբերյալ, ինչպես նաև կարող են մատնանշել լեզվի կառուցվածքային տարրերի քանակական այն փոփոխությունները, որոնք մի կողմից՝ աստիճանաբար պայմանավորում են լեզվի որակական անցումը միջին հայերենին, մյուս կողմից՝ չափորոշիչներ են դառնում լեզվի տիպաբանությունը որոշելու հարցում:

Նախամիջին ենթաշրջանում նկատվող լեզվի կառուցվածքային տարրերի փոփոխությունները մի կողմից՝ լեզվի ներքին զարգացման գործընթացի հետեւանք են, մյուս կողմից՝ ժամանակի ժողովրդախոսակցական լեզվի ազդեցության արդյունք, դրանք պայմանավորված են հեղինակի լեզվի յուրահատկություններով ու կրում են նրա անհատական լեզվամտածողության կնիքը:

Լ.Խաչատրյանի կատարած ուսումնասիրությունը կարելու վրում է այն հանգամանքով, որ Ղեւնդի «Պատմութիւն» երկը հայ մատենագրության մեջ ունի ոչ միայն պատմագիտական ու աղբյուրագիտական, այլեւ բանասիրական լեզվական, տեքստաբանական ու քերականագիտական ընդգծված արժեք:

Սույն մենագրությունը կարող է օգտակար լինել պատմաբանասիրության ոլորտի ասպիրանտներին, դասախոսներին եւ, առհասարակ, հայոց լեզվի պատմության հարցերով զբաղվող մասնագետներին:

Անահիտ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
բանասիրական գիտությունների
թեկնածու

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Դիմիտրովի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (5 դասաժամ), ռուսաց լեզվի (8 դասաժամ), տեխնոլոգիայի (4 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի.

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատու է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:** Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 21-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի միջնակարգ դպրոցում, հասցեն Գ. Դիմիտրով, Մայակովսկի 43/1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 61-24-43 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՆ «Երեւանի Ա. Երզնկյանի անվան հ. 112 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (17 դասաժամ), մաթեմատիկայի (2 մասնագետ, 23 եւ 13 դասաժամ), ռուսաց լեզվի (13 դասաժամ), անգլերենի (13 դասաժամ), գերմաներենի (2 մասնագետ, 8 եւ 6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի.

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- անձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Ձեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,


- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները հանձնատու է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **մինչև հոկտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:** Մրցույթը տեղի կունենա **հոկտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ ԿԳՄՆ Երեւանի Ա. Երզնկյանի անվան հ. 112 ավագ դպրոցում, հասցեն ք. Երեւան, Արզումանյան 8: Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 39-10-70 հեռախոսահամարով:



Հուշագրություն

Երիցս սիրելի իմ Շուշի

Հերթական անգամ Արցախ են մեկնում վաղեմի բարեկամիս եւ հայրենակցիս՝ բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմաբանասիրական հանդեսի» գլխավոր խմբագիր Անուշավան Չաքարյանի հետ: Որոշել ենք մեր արձակուրդի երեք օրն անցկացնել որքան արցախյան, նույնքան էլ նախիջեւանյան եւ, իհարկե, համահայկական բերդաքաղաքում:

Վարդենիս-Քարվաճառ նոր ճանապարհով անցնելիս արդեն կանգառ ենք ունեցել Դաղիվանքում, կրկին ու կրկին հիացել մեր միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցով, վայելել Քարվաճառի անտառների, խորհրդավոր ժայռերի, կապույտ-կապույտ երկնքի ու հորդահոս Թարթառի սքանչելի համայնապատկերները:

Նախիջեւանցիներս Շուշին համարում ենք Արցախի Ազուլիս, քանզի, ինչպես ժամանակին Ազուլիսն է եղել Նախիջեւանի նշանավոր մշակութային կենտրոնը, Շուշին էլ Արցախի հռչակավոր կենտրոնն է եղել: Եվ թուրք-ադրբեջանական ավազակախմբերը միեւնույն քստմնելի ձեռագրով միեւնույն դաժան ճակատագրին են արժանացրել հայության այս երկու անմահ ուստանները: Ազուլիսն ավերվել, թալանվել եւ հրո ճարակ է դարձել 1919 թվականի դեկտեմբերի 24-25-ին, իսկ Շուշին՝ այդ ողբերգությունից ընդամենը երեք ամիս անց՝ 1920 թվականի մարտի 23-ին: 18-րդ դարից Շուշիում են վերաբնակվել մեծաթիվ նախիջեւանցիներ, առավելապես՝ ազուլիսցիներ, շահկերտցիներ: Շահկերտ կամ Դազանջի գյուղից 18-րդ դարում Շուշի տեղափոխված հայերն են հենց կառուցել Դազանջեցոց Սուրբ Ամենափրկիչ տաճարը, Խանդավիրյան թատրոնը, ժամանակին գործել են Ազուլեցոց, Մեղրեցոց եկեղեցիները...

Հիշում են երկար սպասված իմ առաջին հանդիպումը Շուշիի հետ: Երեսուներկու տարի առաջ՝ 1987-ի հուլիսին, երեւանից եկած զբոսաշրջիկների կարգավիճակով մաթեմատիկական մեթոդների գիտահետազոտական ինստիտուտի մի խումբ աշխատակիցներս, մերառաջ ինստիտուտում իմ ղեկավարությամբ գործող «Ազուլիս» համույթը, Արցախ էինք եկել՝ այն ժամանակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ, եւ առաջին իսկ առավոտյան զբոսավարի հետ Շուշի շտապել: Մեքենան կանգ էր առել քաղաքի միակ Իսայի աղբյուրի մոտ, որտեղ կժերով ու դուլներով «զինված» ադրբե-

ջանուկների մի ամբողջ երան ջրի հերթ էր կանգնած: Հայերն այդ ժամանակ բնակչության շատ փոքր մասն էին կազմում դարասկզբի ոճրագործության հետեւանքով:

Հուզված եւ հիացած մտնեալով հայ վարպետների կողմից վերակառուցվող Դազանջեցոցին՝ մի այնպիսի տեսարանի ականատես եղանք, որը հեշտությամբ կարող էր շատ տպավորիչ մի սկանդալի վերածվել. ադրբեջանցի զբոսավարը Բաքվից ժամանած չէիս եւ ռուս զբոսաշրջիկներին «բացատրում էր», որ ադրբեջանցիներն ու ռուսներն են հայերի համար կառուցել այս եկեղեցին: Իսկույն մեր խմբի տղամարդիկ արժանի հակահարվածներ տեղացին կեղծարարի հասցեին, եւ գործը ձեռնամարտի չվերածվեց միայն մեր խաղաղասեր աղջիկների միջամտության շնորհիվ: Այդուհանդերձ, մեր խումբը Երեւան վերադարձավ հայկական Արցախից ստացած անմոռաց տպավորություններով՝ արցախցիներին թողնելով ամեն երեկո «Ղարաբաղ» ռեստորանում հնչող՝ «Ազուլիս» երգչախմբի ազգային-հայրենասիրական երգերի շարանը, իսկ ընդամենը մի քանի ամիս անց շատերս դարձանք Արցախյան շարժման նվիրյալներ...

Այս պատմությունն էի ճանապարհին պատմում ընկերոջս, երբ նա անսպասելի հարցրեց.

– Շուշիի անվան ստուգաբանությամբ երբեւէ զբաղվե՞լ ես:

– Ճիշտն ասած՝ վերջերս նման մի հոդվածի շուրջ եմ մտորում:

– Եվ ի՞նչ:

– Ամենահավանական տարբերակը երեւի տեղանունը Արցախի բարբառի «շոշ» (ծառի ընձյուղ, բարձր տեղ, բարձունք) բառից բխեցնելն է: Այս բառը հայերենի այլ բարբառներում դրսևորվում է նաեւ «շուշ» (ուղիղ բարձրացած, ուղղաբերձ) եւ «շիշ» (ծառի կատար) ձևերով: Քանի որ Արցախի բարբառում միավանկ բառերի «ու» ձայնավորը հնչյունափոխվում եւ դառնում է «օ» (կուժ-կոժ, սուտ-սոտ, տուն-տոն, փուշ-փոշ եւ այլն), հավանաբար բառի նախնական «շուշ» տարբերակից է բարբառում առաջացել «շոշ» ձևը:

– Անկասկած, հենց դրանից էլ բխում է նաեւ Շուշիից ոչ հեռու գտնվող Շոշ գյուղի անունը:

Ես ենթադրում եմ, որ հազարամյակներ շարունակ անառիկ ամրոց եղած,



ՖՈՏՈՒՈՒՐ

ապա ավելի ուշ շրջաններում բերդաքաղաք դարձած Շուշիի աշխարհագրական դիրքն էլ է հուշում, որ այդ անունը քաղաքը ստացել է հենց շրջակայքի վրա իշխող դիրքի պատճառով: Ընկերս համամիտ է ինձ հետ.

– Փաստորեն, անցյալում ամրոցի կրած Շուշի բերդ կամ Շոշի բերդ, Շոշի դալա, Շոշի սղնախ, ինչպես նաեւ Քարազխի բերդ անունները հավասարազոր են, քանի որ բոլորն էլ ունեն «բարձունքի ամրոց» իմաստը, եւ դրանցում ակնհայտորեն նկատի է առնված հենց Շուշիի աշխարհագրական դիրքը:

– Ի դեպ, միջնադարյան ձեռագրերում ավանդված են քաղաքանվան ոչ միայն «ի» հոլովիչով Շուշի, այլեւ «ու» հոլովիչով Շուշու եւ «ո» հոլովիչով Շուշոյ ձևերը: Վերջին մի քանի դարերում բերդաքաղաք դարձած Շուշին շարունակել է կրել բերդի անունը հենց սեռական հոլովով:

– Իսկ ինչո՞ւ են ադրբեջանցիները քաղաքը Շուշա անվանում: Իբր դա համարում են «ադրբեջանական» ձե՞լ:

– Իհարկե, այդպես էլ փորձում են ներկայացնել: Սակայն, իրականությունն այն է, որ հայկական տեղանունների սեռական հոլովը ե՛ւ գրաբարում, եւ միջին հայերենում, եւ բարբառների մեծ մասում կազմվում է առավելապես «ա» հոլովիչով (Երեւան-Երեւանա, Վան-Վանա, ճահուկ-ճահկա, Գարդման-Գարդմանա եւ այլն), ուստի, անկասկած, Շուշին ունեցած պետք է լինի նաեւ Շուշա սեռականաձեւ տարբերակը, որի վկայությունն է այսօր էլ Արցախի բարբառում կիրառական Շուշվա ձևը:

– Հետեւաբար, կարող ենք հիասթափեցնել ամեն հայկականը կլանել ցանկացող ադրբեջանական ելուզակներին, որ Շուշա տարբերակը ամենեւին էլ կապ չունի ադրբեջաներեն շուշա («ապակի») բառի հետ, ինչպես իրենք են հորինում: Ի դեպ, ըստ ադրբեջանական այդ զավեշտալի «ստուգաբանության» քաղաքն իր անունը ստացել է իբր «ապակու նման» մաքուր օդ ունենալու պատճառով: Լավ, ենթադրենք, թե աշխարհի բոլոր ապակիները մաքուր են, բայց մաքուր օդը որեւէ տրամաբանությամբ կարելի է համեմատել... ապակու հետ, – ծիծաղում է ընկերս:

– Անուշավան ջան, ստի ոտքերը միշտ են կարճ. նրանք անգամ «մոռանում են», որ պարսկերենից փոխառյալ «շուշա» (ապակի) բառի երկու ձայնավորներն էլ իրենց լեզվում քմային են, իսկ քաղաքի՝

իրենց անվանման ձայնավորներից ոչ մեկը քմային չէ: Լավ, այդքան էլ բացահայտ կեղծեն ամեն ինչ: Ստացվում է, որ թուրքերն էլ նույն անտրամաբանական տրամաբանությամբ կարող են «Վանա բերդ» ձեւը թուրքերեն համարել, իսկ «Վանի բերդ» տարբերակը՝ հայերեն:

– Ադրբեջանցիները միշտ են դրսևորել հայկական տեղանունները աղավաղելու եւ յուրացնելու այդ ակնհայտ մոլուցքը: Այդ մասին «Պատմաբանասիրականում» մի հետաքրքիր հոդված է իրապարակել քո ազգական Աշոտ Սարգսյանը: Նա նշել է, որ ադրբեջանցիների համար բոլորովին էլ պարտադիր չէ, որ հայկական տեղանունների իրենց հորինած «տարբերակները» որեւէ տրամաբանական բովանդակություն ունենան: Օրինակ Նախիջեւանի Շահապոնք կամ Շահապոնս բերդաքաղաքը, որը հազարամյակներ շարունակ հայտնի Շահապոնսի տոհմի ամրոցն է եղել, դարձրել են Շահբուլ (պարսկերեն «շահ»՝ թագավոր) եւ թուրքերեն «բուլ» (սառույց) բառերից. բառացիորեն ստացվում է իմաստագուրկ եւ անհեթեթ մի բան՝ «թագավորի սառույց», պատմական Ուտիքի խաղիաղ գավառանունը դարձրել են Դազախ (իբր սա էլ թյուրքական դազախ ցեղանունից է «բխում»), Տավուշը դարձրել են Թուվուզ («կապելով» քրդերեն «թավուս» («սիրամարդ») բառի հետ): Այս նույն «սկզբունքով», ի դեպ, Արցախի պարսկերեն պատմական անվանումներից մեկը՝ Առան-է բաղը («անտառային Առան») դարձրել են Դարաբաղ («սեւ այգի»):

– Բայց որքան էլ որ կեղծարարները կաշվից դուրս գան, միեւնույն է, Շուշի տեղանվան երկու տարբերակներն էլ միանշանակ հայերեն են, – եզրափակում են մե:

Տեղավորվելով «Շուշի Ավան Պլազա» նորակառույց հյուրանոցի մեզ հատացված սենյակներում եւ առաջին թեյն ըմբռնելով զովաշունչ բերդաքաղաքում երեկոյան կողմ արդեն զբոսնում ենք վաղուց հարագատ եւ սիրելի դարձած Շուշիում, վայելում քաղաքի աննկարագրելի մայրամուտը: Ամենուրեք աչք շոյող շինարարություն է՝ վերակառուցվող կամ նոր կառուցվող տներ: Առաջինը մտնում ենք Դազանջեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի՝ Կանաչ ժամը թողնելով հաջորդ օրվան:

շարունակությունը՝ էջ 11



Երիցս սիրելի իմ Շուշի

սկիզբը՝ էջ 10

Ինձ միշտ զարմացնում է Սուրբ Ամենափրկչի կաթնագույն-լուսավոր շինաքարը, իսկ քանդակագեղ մուկետիկ-հրեշտակը... Միշտ երկար նայում եմ նրան. բարություն, մարդկային խիղճ, գթասրտություն եւ էլի շատ այլ արժեքներ են ճառագում նրանից, որոնց պակասը այսօրվա աշխարհում, ցավոք, շատ է զգացվում... Ի դեպ, քանդակը հայկական Շուշիի խորհրդանիշն է՝ պատկերված նաեւ քաղաքի զինանշանի վրա:

Շուշիում դեռեւս մնացել են անցյալ դարասկզբին ավերված ու հրդեհված՝ հատմանցող մոշի հսկայական թփերով պարուրված տների ավերակները, որոնք ականա հիշեցնում են հայ ժողովրդի մեծ բարեկամ, ռուս բանաստեղծ Օսիպ Մանդելշտամի «Կառապանը» հայտնի բանաստեղծությունը, որ գրել է Շուշիի կոտորածից տարիներ անց.

*Տեսա գիշատիչ քաղաքը Շուշի,
Ուր ճաշակեցի սարսափներ մահի՝
Յոգուս խռովքին համանվագ:
Քառասուն հազար մեռյալ լուսամուտ,
Ակնախոռոչներ մութ, սնամեջ.
Դառը տքնանքի բոժոժը հմուտ
Թաղված էր այնտեղ՝ լեռների մեջ...*

Յաջորդ առավոտյան զարմանքով նկատում եմ, որ իմ պատուհանից ոչ միայն Ղազանցեցոցի գմբեթն ու խաչն են երեւում, այլև մզկիթները, որոնցից մեկի վերականգնումը ըստ մասնուկի, ավարտական փուլում է: Փաստորեն երեք օր Սուրբ Ամենափրկչին նայելով եմ առավոտյան իմ «Յայր մերը» ուղղելու առ Աստված՝ աղոթելով նաեւ Շուշիի ու Արցախի համար...

Նախաճաշից առաջ հյուրանոցի սրահում ծանոթանում եմք քաղաքագետների սեմինարին մասնակցելու համար Շուշի ժամանած ֆեյբուքյան իմ ընկերների տնտեսագետ Անդրանիկ Թեւանյանի եւ քաղաքագետ Ստեփան Դանիելյանի հետ, ապա որոշում այցելել Շուշիի վերակառուցվող պարսկական մզկիթը:

Գոհար աղա կամ Վերին մզկիթի վերականգնումը, իրոք, ավարտվում է, վերջին օժանդակ եւ հարդարման աշխատանքներն են տարվում: Եվ Իրանից ժամանած ճարտարապետների ու շինարար վարպետների խումբը, եւ հայ շինարարներն ու երիտասարդ աշխույժները եռուզեռի մեջ են: Պարսկական ճարտարապետության ավանդույթներով կառուցված հոգեւոր կառույցի հորինվածքն նաեւ հայ ճարտարապետության տարրեր է նկատվում. ի վերջո, անկասկած, ժամանակին հայ վարպետներ էլ են մասնակից եղել կառուցմանը:

Թավրիզի ճարտարապետից փորձում եմ իմանալ՝ ինչու է մզկիթը Գոհար աղա կոչվում: Նրա պատասխանից հասկանում եմ, որ ժամանակին քաղաքի գլխավոր մզկիթն է եղել, եւ անունն էլ բառացի նշանակում է Գոհար կաթողիկե մզկիթ կամ Գոհար մայր մզկիթ: Յետո այնտեղ գտնվող իմ բարեկամ, արեւելագետ Արտեմ Տոնոյանից իմանում եմ, որ վերականգնումից հետո նախկին հոգեւոր կենտրոնը դառնալու է արեւելագիտական կենտրոն: Այստեղ պարբերաբար հրավիրվելու են սեմինարներ ու գիտաժողովներ:

Գրեթե ողջ օրը շրջում եմք քաղաքում, այցելում Շուշի քաղաքի պատմության, դրամագիտական, գորգերի թանգարանները, իսկ երեկոյան հյուրանոցում անսպասելիորեն հանդիպում եմ երեւանի իմ հարեւանին՝ սարգսաշենցի գործարար Նորայր Ստեփանյանին, որի հիմնական բնակության վայրը, իհարկե, հայրենի Ար-

ցախն է, բայց պարբերաբար ընտանիքով ժամանակավորապես բնակվում են նաեւ Երեւանում: Մենք վաղուց էինք պայմանավորվել միասին Տիգրանակերտ գնալ, բայց գերզբաղվածության պատճառով հարեւանս խոստացավ իր մեքենան ուղարկել մեզ Տիգրանակերտ տանելու համար:

Վաղ առավոտյան, իսկապես, Նորայրի քեռորդի Արամը եւ տղան՝ դպրոցական Նարեկը, մեզ էին սպասում հյուրանոցի մուտքի մոտ: Ուղեւորվեցինք դեպի Տիգրանակերտի հնավայր, որտեղ մոտ տասը տարի առաջ էի եղել՝ գործընկերներիս հետ:

Տիգրանակերտում մեզ էր սպասում մեր վաղեմի բարեկամը Արցախի հնագիտական արշավախմբի ղեկավար, Երեւանի պետական համալսարանի մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Զամլետ Պետրոսյանը՝ իր հնագիտական արշավախմբով: Նրանք, ի դեպ, «Ճամայրուկային» տրամադրությամբ պատրաստվում էին հաջորդ օրը Երեւան վերադառնալ, բայց դա չխանգարեց մեզ ծանոթանալ հնավայրում իրականացված նոր աշխատանքներին եւ անելիքներին:

Պեղումների արդյունքում հայտնաբերված եկեղեցու տարածքը, հնավայրի թանգարանը եւ Փանահի աղբյուրը այցելելուց հետո խմբի ամենաերիտասարդ հնագետ Արմինե Գաբրիելյանը սիրով հանձն է առնում մեր քառյակին ամրոցի պարիսպների ամենանոր հայտնաբերված հյուսիսային պարսպապատի նորահայտ հատվածներին ծանոթացնելու գործը: Արմինեն անտիկ շրջանի խեցեղենի մասնագետ է, այդ թեմայով իր թեկնածուական ատենախոսությունն է պատրաստվում պաշտպանել առաջիկա ամիսներին:

Ամենատպավորիչը եւ ամենազարմանալից պարսպի ծածկանակապոչ կապերով հսկա քարերն էին, որոնք շատ բնորոշ են անտիկ շրջանի կառույցներին, նաեւ, իհարկե, հայկականին: Զավանաբար, մեր նախնիների արարած հզոր կառույցի հոգեւոր ուժից ոգեշնչվելով՝ հսկա լեռնալանջը բարձրանում ենք մի շնչով: Լուսանկարվում ենք պարիսպների ամենատպավորիչ հատվածների մոտ, ապա իջնում վայրի նմաններով ու թզենիներով եզերված սարալանջով:

Իսկ նախքան Վանքասարի եկեղեցի բարձրանալը, Զամլետ Պետրոսյանի խնդրանքով եւ պահանջով ճաշում ենք արշավախմբի հետ՝ հնավայրի «խոհանոցում», որ մի փոքրիկ, հաճելի շինություն է, որտեղ հնագետ կանայք իսկական տնական ճաշ են պատրաստել:

Վերադարձից մի օր առաջ՝ առավոտյան, ըստ ծրագրի, գնում ենք Զոննոտի կիրճի Կատարոտ կամ Զորդուզ հարթավայրը: Շուշիի հին փողոցներով անցնելիս անընդմեջ մեզ են միանում զբոսաշրջիկներ, տեղի բնակիչներ եւ անթիվ-անհամար երեխաներ, որոնց մեջ երկու թմբկահարներից եւ մի երգչից բաղկացած հինգ-վեց տարեկան տղաների մի յուրօրինակ «համույթ»: Արդեն Կատարոտի դաշտում նրանք սպառում են ազգային-հայրենասիրական երգերի իրենց ողջ երգացանկը եւ անսպասելիորեն անցնում կասկածելի ծագումով «բլադնոյ» երգերի շարանի՝ «Դոյա վորովսկայա» եւ այլն: Նրանց «հոնորարը» վճարելուց հետո խորհուրդ ենք տալիս վերանայել իրենց երգացանկի այդ ոչ խրախուսելի հատվածը:

– Մուկը շատ ընք սիրում էտ երբերը, պա հո՛ւնց չը երբինը,– արդարանում էին «գողական բախտի» մեկնիչները:

Վերջին մայրամուտին, զարմանալի



© Vahagn Grigoryan

զուգահիստությամբ, Ղազանցեցոցի դիմաց գտնվող մի համեստ սրճարանում Արցախի նշանավոր ժինգայով հացով եւ երեւանյան գարեջրով ակամա նշում ենք իմ եւ Անուշավանի ընկերության, ո՛չ ավել, ո՛չ պակաս, քսանհինգամյակը, որի մասին պատահաբար հիշում ենք հենց այդ պահին:

Փաստորեն, ուղիղ քառորդ դար առաջ իմ հայրենակիցը, որ այն ժամանակ Ազգային ժողովի հրատարակչական բաժնի վարիչն էր, ինձ Զանգապետության նախագահի աշխատակազմ ուղարկեց՝ արձանագրային բաժնում պահանջվող հայոց լեզվի փորձառու խմբագրի տեղի համար, աշխատակազմի ղեկավար Շահեն Կարամանուկյանի խնդրանքով: Մեր վաղեմի բարեկամության նշանակալի հորելյանը այդքան համեստորեն նշելով իհարկե, պայմանավորվեցինք Երեւանում հետո «մի կարգին» վերանշել:

Վերջին երեկոն անցկացրինք հյուրանոցի մերձակայքում գտնվող զբոսայգում: Երկար նստել էինք ազգային երկու Վազգեն Սարգսյանի արձանի մոտ դրված նստարանին, երբ քիչ հեռու նկատեցինք Զորդուզի փոքրիկ երգչին եւ իր թմբկահար ընկերներին: Պարզվեց՝ եղբայրներ են, բազմամղան ընտանիքից, հայրն էլ Ռուսաստան է գնացել՝ աշխատելու:

Պապս պատմում էր, որ իր պապ Մուղսի Վարդանից, պապի պապ Մառատ Գրիգորից եւ նրա նախապապից էլ շատ առաջ՝ 17-րդ դարի վերջերին, երբ Արցախում մեծ երաշտ է եղել, մեր տոհմը Արցախից է Նախիջեւան տեղափոխվել եւ նպաստել շահաբբասյան բռնազաղթի հետեւանքով մի քանի տասնամյակ ամայացած իմ հայրենի Ազնաբերդի վերականգնմանն ու վերահայացմանը: Այս

ամենը հիշում եւ Անուշավանին պատմում եմ վերադարձի օրվա առավոտյան:

– Փաստորեն, մի կես տոկոսով արցախցի ես,– կատակում է Անուշավանը:

– Արցախցու կես տոկոսը ո՞րն է, ուղղակի նաեւ արցախցի եմ: Տեսնես Արցախի ո՞ր գավառից է իմ հեռավոր նախապապը Նախիջեւան գնացել: Երեւի Վարանդայից՝ Շուշիի կողմերից,– գրեթե համոզված ենթադրում եմ ես:

Թեեւ որոշել էի ամեն տարի առնվազն երեք օրով ապրել Շուշիում, միեւնույն է, հրաժեշտը մի տեսակ տխուր է ու ճնշող: Բոլորովին չեմ ուզում բաժանվել մեր նորոյա ազատամարտի խորհրդանիշ, իր սալահատակ փողոցներով, պատկառագրու եկեղեցիներով ու հնամյա տներով իմ կորուսյալ Ազուլիսին այնքան նման այս հարազատ-հարազատ քաղաքից, մեր պատմության ու մշակույթի հավերժող առասպել Շուշիից:

Ստեփանակերտում մեզ սպասող տաքսու կանգառ ավտոբուսով ենք հասնում: Որքան զուսպ, բարեկիրք ու նրբանկատ են շուշեցիները. ավտոբուս բարձրանալիս երիտասարդներն անմիջապես տեղավորում են մեր իրերը, իսկ ողջ ճանապարհին ոչ ոք բարձրաձայն չի խոսում, անգամ երեխաները չեն աղմկում:

* * *


...Եվ առ այսօր իմ ամենամյա եռօրյա ուխտը շարունակում է ապրել հոգուս նվիրական խորքերում, եւ երբեք-երբեք չեմ ուզում հավատալ, որ վերջին անգամ եմ այցելել իմ կորուսյալ Ազուլիսի անդարմանելի ցավի ամոքիչ սպեղանի, երիցս սիրելի իմ Շուշի...

Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ


Ճ ա ն ա չ ե լ զ ի մ ա ս տ ու թ ի լ ն ե լ զ ի ր ա տ

Մարգարիտներ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ քնարերգությունից

Պատմահայր ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ՝ քնարերգակ




Օով կենցաղոյս հանապազ զիս ալելոճէ, Մրրկեալ ալիք թշնամին ինձ յարուցանէ. Նաւապետ բարի, լեր անձին իմոյ ապաւեն: Ի համբառնալ իմուն առ քեզ զաչս իմ՝ օգնեա՛ ինձ, տէր: Ի յօրնութիւն նոր օրհնեսցուք զքեզ, Քրիստոս փրկիչ մեր: Այցելու մեր եւ փրկիչ, կեցո՛ր զանձինըս մեր:



Ի ներութեան իմուն օգնեա՛ ինձ, տէ՛ր, Որպէս երբեմն Յովնանու, եւ ողորմեա՛:
Ի յանցանաց իմոց մաքրեա՛ զիս, տէ՛ր, Որպէս երբեմն զմաքսաւորն, եւ ողորմեա՛:
Ի նենգաւոր շղթանց փրկեա՛ զիս, տէ՛ր, եւ յարենէ ապրեցո եւ ողորմեա՛:

(Հայ դասական քնարերգություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 139-140)



Խորհուրդ մեծ եւ սքանչելի, Որ յայսմ աւուր յայտնեցաւ, Հովիւքն երգեն ընդ հրեշտակս՝ Տան աւետիս աշխարհի:

Ծընաւ նոր արքայ Ի Բեթղեհէմ քաղաքի, Որդիք մարդկան, օրհնեցէ՛ք, Չի վասըն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի Ի խանձարուրս պատեցաւ, Ո՛չ մեկնելով ի հօրէ՛ Ի սուրբ այրին բազմեցաւ:

Սիւն լուսոյ եւ ամպիովանի, սուրբ կոյս, Որ ցօղեցեր ի մեզ զցօղն երկնային, Չքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

Անկէզ մորենի եւ սերովբէ՛ հողողէն, սուրբ կոյս, Քանգի պտուղն կենաց ի քէն տուաւ մեզ, Չքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

Անիծիչ լուծիչ եւ քաւիչ մեղաց, սուրբ կոյս, Որ զանտանելին էից ի գիրկս քո բարձեր Չքեզ բարեբանեմք, աստուածածի՛ն եւ կոյս:

(Հայ դասական քնարերգություն, հ. 1, Երեւան, 1986, էջ 145)

Վարդան Մամիկոնյանի խոսքը Ավարայրի ճակատամարտից առաջ (հատված ԵՂԻՇԵԻ «Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին» երկից)



Սկսաւ սպարապետն խօսել միաբանութեամբ նախարարացն ընդ զօրսն եւ ասէ.
«Ի բազում պատերազմունս մտեալ է ին, եւ ձեր ընդ իս. է ուրեք՝ զի քաջապէս յաղթեցաք թշնամեացն, եւ է ուրեք՝ զի նոքա մեզ յաղթեցին. եւ բազում այն է՝ որ յաղթող գտեալ ենք եւ ոչ յաղթեալք: Եւ միանգամայն այն ամենայն էին մարմնոյ պարծանք. քանզի հրամանաւ անցաւոր թագաւորին մարտնչեաք: Որ փախչէր, վատանուն յաշխարհի երեւեր, եւ անողորմ մահ ի սմանէ գտանէր, իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր, եւ պարգեւս մեծամեծս յանցաւոր եւ ի մահկանացու թագաւորէն ընդունէր: Եւ մեք իսկ աւասիկ յիրաքանչիւր մարմինս ունիմք վերս եւ սպիս բազումս. եւ բազում այն քաջութիւն իցէ, վասն որոյ առեալ իցէ եւ պարգեւս մեծամեծս: Անարգ եւ անօգուտ զքաջութիւնսն համարիմ, եւ առ ոչինչ զպարգեւսն բազումս. վասն զի ամենքեան խափանելոց են:
«Իսկ արդ եթէ վասն մահկանացու հրամանատուին զայն արութիւնս կատարեալք, որչափ եւս առաւել վասն անմահ Թագաւորին մերոյ, որ Տէրն է կենդանեաց եւ մեռելոց, եւ դատելոց է զամենայն մարդ ըստ գործոց իւրոց: Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց ենք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ եւս ելանիցենք ի սմանէ:
«Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ քաջ միզակակիցք իմ. մանաւանդ զի բազումք ի ձէնջ լաւագոյնք էք քան զիս արութեամբ, եւ գահու ի վեր ըստ հայրենի պատուոյն. բայց յորժամ ձերով կամօք եւ յօժարութեամբ առաջնորդ եւ զօրագլուխ ձեզ կացուցէք, հեշտ եւ բաղձալի թուեսցին բանք իմ ի լսելիս մեծամեծաց եւ փոքունց: Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն, եւ մի՛ յահագին սրոյ առն մահկանացուի զփրկունս դարձուցուք, զի եթէ տացէ Տէր յաղթութիւն ի ձերք մեր, սատակեսցուք զզօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան. եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք»:



(Եղիշե, «Վարդանի եւ Հայոց պատերազմի մասին», թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ե.Տեր-Մինասյանի, Երեւան, 1989, էջ 202-206)

Ի մ ա ն ա լ զ ք ա ն ս հ ա ն ճ ա ր ոյ

Իմաստասիրության վեց սահմանումները՝ ըստ ԴԱՎԻԹ ԱՆՅԱՂԹԻ

(հատված «Սահմանք իմաստասիրության» աշխատությունից)



Արդ ուսեալք ի ձեռն բաժանման, եթէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն, եթէ տեսական է և գործական: Այլ ի ձեռն սահմանացն ծանեալք, թէ որպիսի ինչ է իմաստասիրութիւն. քանզի ի ձեռն սահմանացն, որ յենթակայէն են՝ այս ինքն ի ձեռն այնր որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, և իմաստասիրութիւն է գիտութիւն աստուածայնոց և մարդկայնոց իրողութեանց՝ ուսաք, եթէ տեսական է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց՝ ուսաք, եթէ իշխանական է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկունմ մահու՝ ուսաք, եթէ մաքրող ախտից է իմաստասիրութիւն: Իսկ ի ձեռն սահմանին՝ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է սմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան՝ ուսաք, թէ քաղաքական է իմաստասիրութիւն. քանզի քաղաքական իմաստասէր կամի և ըստ գիտութեան և ըստ գործոց որչափ կարողութիւն է մարդոյն սմանիլ աստուծոյ:

Եւ պարտ է փութապէս ասել, երկուց տեսակց ելոց իմաստասիրութեան տեսականին և գործականին, և վեց սահմանաց, ոմանք ի տեսականն իմաստասիրութիւն վերաբերին և ոմանք ի գործականն և ոմանք յերկարանջիրսն: Քանզի երկու սահմանք՝ որ յենթակայէ, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն էակացն ըստ որում էակք են, որ ասէ, իմաստասիրութիւն է գիտութիւն ընդ իրողութեանց. և մի՛ որ յառաւելութենէ, որ ասէ, իմաստասիրութիւն է արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց, ի տեսական մասն իմաստասիրութեան վերաբերի: Իսկ մին՝ որ ի հուպ կատարմանէ, որ ասէ, թէ իմաստասիրութիւն է խոկունմ մահու, և միւսն ևս՝ որ ի ստուգաբանութենէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն և սիրելութիւն իմաստութեան, ի գործական մասն վերաբերին: Իսկ որ ի հեռի կատարմանէ, որ ասէ՝ իմաստասիրութիւն է սմանութիւն աստուծոյ ըստ կարողութեան մարդկան, առ երկուսեան վերաբերի:


(Դավիթ Անյաղթ, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», համահավաք քննական քննադրերը եւ առաջաբանը Սեն Արեւշատյանի, Երեւան, 1980, էջ 103)

ՆԵՐՍԵՍ ԸՆՈՐՅԱԼՈՒՄ տաղը՝ ըստ Հայոց այբուբենի

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեալ:
Բոյխունմ ի հօրէ,
Բոյխեալ՝ ի հոգոյս
Բան քեզ ի հաճոյս:
Քանձո՞ղ ողորմութեան
Քանձո՞ղ ծածկելոյ
Քանձո՞ղ զիս արա:
Քանձո՞ղ ողորմութեան
Քանձո՞ղ զիս արա:
Քանձո՞ղ ողորմութեան
Քանձո՞ղ զիս արա:
Քանձո՞ղ ողորմութեան
Քանձո՞ղ զիս արա:
Քանձո՞ղ ողորմութեան
Քանձո՞ղ զիս արա:
Քանձո՞ղ ողորմութեան
Քանձո՞ղ զիս արա:

Թողութեանց տուող,
Թող ինձ գյանցանս:
Ժողովող բարեաց,
Ժողովեալ՝ եւ զիս
Ժողովս անդրանկաց:
Ի քէն, տէ՛ր, հայցեմ,
Ի մարդասիրեղ՝
Ինձ բժշկութիւն:
Լե՛ր կեանք մեռելոյս՝
Լոյս՝ խաւարելոյս,
Լուծանո՞ղ ցաւոյս:
Խորհրդոց գիտող,
Խաւարիս շնորհեա,
Խորհու՛րդ լուսաւոր:
Ծնունդ հօր ծոցոյ,
Ծածկելոյս ստուերաւ,
Ծագեալ՝ զլոյս փառաց:
Կենարար փրկիչ,
Կեցո՞ղ զմեռեալս,
Կանգնեալ՝ զգլորեալս:
Հաստեալ՝ հաւատով.
Հաստատեալ՝ յուսով,
Հիմնեցո՞ղ սիրով:
Ձայնիս աղաչեմ,
Ձեռքս պաղատիմ,

Ձիր բարեաց շնորհեալ:
Ղանբարամբ լուսոյ,
Ղեկավար ճարտար,
Ղօղեալս ամրացո՞ղ:
Ճառագայթ փառաց,
Ճանապարհ ինձ ցոյց,
Ճեպել ի յերկինս:
Միածինըդ հօր,
Մոյճ զիս յառագաստ
Մաքուր հարսանեաց:
Յորժամ գաս փառօք,
Յահագին աւուրն,
Յիշեալ՝ զիս, Քրիստոս:
Նորոգող հնութեանց,
Նորոգեալ՝ եւ զիս:
Նորոգ գարդարեալ:
Շնորհատու բարեաց,
Շնորհեալ՝ զբաւութիւն,
Շնորհեալ՝ զթողութիւն:
Ուրախացո՞ղ, տէր,
Ուրոյս փրկութեամբ,
Ոյր վասն եմ ի սուգ:
Չար մշակողին,
Չար սերմանց նորին
Չորացո՞ղ զպտուղն:
Պարգեւիչ բարեաց,
Պարգեւեալ՝ ինոց
Պարտեացս



Սիրտ իմ քարեղէն:
Վասն գթութեանդ,
Վասն ողորմութեանդ,
Վերադարձի կեցո՞ղ:
Տենչալոյդ տեսլեամբ,
Տու՛ր ինձ յագեմալ,
Տէր Յիսուս Քրիստոս:
Րաբունդ երկնաւոր,
Րոտեալ՝ զաշակերտս
Րամից երկնայնոց:
Յող արեան քո, տէր,
Յօղեալ՝ ի հոգիս,
Յնծասցէ անձն ին:
Իլիծեալըս մեղօք,
Իլիծեալ՝ աղաչեմ,
Իլիսեալ յիս բարիս:
Փրկի՛չ բոլորից,
Փութա զիս փրկել
Փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց,
Քաւեալ՝ զօրհնաբանս,
Քեզ երգել զփառս:



(Հայ դասական քնարերգւոյն, հ. 1, Երեւան, 1986, էջ 224-226)

ԲԱՆ Թ


Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ (հատված ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ «Մատյան ողբերգության» պոեմից)

Ա
Եւ արդ, զի՞նչ
արժանաւոր ըստ քեզ
բամբասանս
շարագրեցից
Ի կտակ մաղթանաց
մատենի այսր
ողբերգութեան,
Ո՛վ անձն իմ թշուառ,
ամենապատկառ
Եւ առ պատասխանիս
բանից անբարբառ,
Անպիտան Աստուծոյ և
սրբոցն
մասնակցութեան:
Չի եթէ զլիճ մի ծովուց
ի յորակութիւն դեղոյ
յեղելեցից,
Եւ զղաշտս սպարիսօք
բազմօք սահմանեալ՝
Ի տարածումն լայնութեան քարտենի չափեցից,
Եւ զպուրակս յոգուց անտառաց շամբից եղեգանց
Ի հատուածս գոյութեան գրչաց կազմեցից,
Եւ ո՛չ գթիւ մի ի բարդելոցն անօրէնութեանց
Չօրեցից ընդ գրով սահմանի գրաւել:
Նա զի եթէ զմայրս Լիբանանու ի մեծ լուծ կշռոց զօղեցից,
Եւ կամ զլեռն Արարատեան
Ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ո՛չ հաւասարէ այնր հարթութեան համազուգակցել:



Բ
Ծառս ամբարձուղէ, ստուարաստեղն,
Տերևալից՝ ունայն ի պտղոց,
Նմանակից յաւետ հարազատ այնր թգնուոյ,
Չոր Տէրն զաւսացոյց:
Քանզի սաղարթօք վարսից,
Այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպից,
Իբր պսակաւ իմիք պաճուճեալ,
Բացականացն զոս բաղձալի,
Իսկ եթէ մերձեսցի տնկողն խուզել զխնդրելին,
Գտցէ զքեզ ունայն ի բարեաց
Եւ զարշելի ի գեղեցկութեանց՝
Ծաղր տեսողաց և նշաւակութիւնք նախատողաց:
Չի եթէ ապաժաման յանգգոյ ժամուն
Չերապանձ տունկն պտղակորոյս, անկենդան,
Որ դոյզն պատկեր է անպատրաստից,
Եկն ընդ անիծիք,
Եւ կամ երկիր, ոռոգեալ ցօղով,
Եւ ոչ բազմապատիկ զաւանդս արգասեաց
Երկրագործութեան տածողացն մատուցանէ՝
Լքեալ մոռանի,-
Իսկ դու, ո՛վ անձն իմ եղկելի,
Սահման բանաւոր և տունկ կենդանի,
Եւ ոչ ի ժամու իւրում պտղաւոր,
Ի՞բր ոչ զնոյնն կրեսցես պատիժ նախնուն առակիդ:
Վասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս
յառաւելութեանց,
Սկզբնաւորեալ ի մարդն առաջին
Եւ մինչև ի սպառումն ծննդոց նորին,
Չբերս գործոց նանրութեանց և զգիտս նորոգս՝
Ատելիս և անախորժելիս հաստողին զքեզ՝ աստուծոյ:

(«Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատեան ողբերգութեան», Երեւան, «Սուղնի», 2003, էջ 58-59)





Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի «Մարմարաշենի Ա. Բարոթյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (12 դասաժամ), գերմաներենի (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ քեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- ամձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ հոկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույքը տեղի կունենա **հոկտեմբերի 20-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արարատի մարզի Մարմարաշենի Ա. Բարոթյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Մարմարաշեն, Երեւան-Արտաշատ խճուղի 71։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 97-64-80 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկայի (29 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ քեստավորման եւ հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Չեւ 1), մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

- ամձը հաստատող փաստաթուղթ,

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

- ինքնակենսագրություն (Չեւ 5),

- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաեւ զինվորական գրքույկ,

- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 12-ից մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույքը տեղի կունենա **հոկտեմբերի 25-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արմավիրի մարզի Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Նոր Կեսարիա, փ. 14, շ. 20։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (077) 94-96-34 հեռախոսահամարով։

Ա Ձ Դ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Երեւանի արհեստագործական պետական ուսումնարան*» ՊՈԱԿ-ի «*Ոսկերչության վարպետ*» (1 դրույթ), «*Էլեկտրական սարքերի, մեքենաների եւ ապարատների փորձարկում*» (1 դրույթաչափ), «*Հայոց լեզու*» (22 դասաժամ), «*Ֆիզիկուլտուրա*» առարկաների դասավանդող մանկավարժների թափուր տեղերի համար։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում* («Չեւ 1»),

- *Կրթության մասին հաստատող փաստաթուղթ (դիպլոմ)*(բժօրինակը եւ պատճենը),

- *Անձնագիր (բժօրինակը եւ պատճենը),*

- *Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

- *Ինքնակենսագրություն* («Չեւ 4»),

- *1 լուսանկար՝ 3x4 չափի։*

- *Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,*

- *Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ(բժօրինակը եւ պատճենը),*

- *Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։*

Փաստաթղթերը ընդունվում են **հոկտեմբերի 12-ից մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույքը տեղի կունենա **հոկտեմբերի 27-ին ժամը՝ 14:00-ին**, «Երեւանի արհեստգործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ում. հասցեն՝ ք. Երեւան, Նոր Նորքի 4-րդ զանգված, Գյուլիքեխյան 20։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 63-40-70 հեռախոսահամարով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՍՆ «*Արարատի պետական բժշկական քոլեջ*»

ՊՈԱԿ-ի «*Ֆիզիկուլտուրա*» առարկայի (482 ժամ) դասախոսի թափուր տեղի համար։
Թափուր տեղի համապատասխանության նկատմամբ սահմանված պահանջներն են.

Ուսումնական պարապմունքները վարող դասախոջ պետք է ունենա դասընթացի բնույթին բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում եւ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային փորձ։
Վերոնշյալ դասընթացները վարող դասախոսների համար աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է։

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային եւ հարցազրույցի։ Մասնակիցների գիտելիքների եւ կարողությունների ստուգումը՝ հարցազրույցն իրականացվելու է քոլեջի կողմից կազմված հարցատոմսերով։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- *դիմում* (Չեւ 1),

- *կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)* (բժօրինակը եւ պատճենը),

- *անձնագիր (բժօրինակը եւ պատճենը),*

- *աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում)*

- *ինքնակենսագրություն* (Չեւ 4),

- *մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

- *Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բժօրինակը եւ պատճենը),*

- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։*

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի։

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 12-ից, մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00 – 16:00-ն, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույքը տեղի կունենա **հոկտեմբերի 31-ին՝ ժամը 12:00-ին**, Արարատի պետական բժշկական քոլեջում, հասցեն՝ ք. Արարատ, Խանջյան 63։

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-41-04, (093) 93-98-98 հեռախոսահամարներով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ «*Արևիլյանի բազմագործառութային պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի զբոսաշրջայի ոլորտի մասնագետի միջին մասնագիտական կրթական ծրագրով «*Ջբոսաշրջություն*» մասնագիտությամբ ընդիաճուր եւ հատուկ մասնագիտական մոդուլի դասախոսի թափուր տեղի համար։

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգման անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում* (Չեւ 1),

- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)* (բժօրինակը եւ պատճենը),

- *անձնագիր (բժօրինակը եւ պատճենը),*

- *աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

- *ինքնակենսագրություն* (Չեւ 4),

- *մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

- *այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,*

- *Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բժօրինակը եւ պատճենը),*

- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։*

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ հոկտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**

Մրցույքը տեղի կունենա **հոկտեմբերի 20-ին՝ ժամը 15:00-ին**, «Արևիլյանի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Արևիլյան, ուսանողական նրբանցք 4։

Տեղեկությունների համար զանգահարել (060) 75-20-50 հեռախոսահամարով (աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից 16:00-ը)։
Էլեկտրոնային հասցեն՝ absecoll@je@mail.ru։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «*Չարենցավանի պետական քոլեջ*» ՊՈԱԿ-ի «*Ֆիզիկուլտուրա*» առարկայի դասախոսի թափուր տեղի համար։

Մրցույքը անցկացվում է ըստ Չարենցավանի պետական քոլեջի մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման եւ անցկացման ընթացակարգի։

Դասախոսի թափուր տեղի համար մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին

Դասախոսի վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման։

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովն է ներկայացնում՝

- *դիմում* (Չեւ 1),

- *կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)* (բժօրինակը եւ պատճենը),

- *անձնագիր (բժօրինակը եւ պատճենը),*

- *աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),*

- *ինքնակենսագրություն* (Չեւ 4),

- *մեկ լուսանկար՝ 3x4 չափի,*

- *այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,*

- *Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինվորական գրքույկ (բժօրինակը եւ պատճենը),*

- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)։*

Փաստաթղթերն ընդունվում են **հոկտեմբերի 12-ից մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից։**
Մրցույքը տեղի կունենա **հոկտեմբերի 28-ին՝ ժամը 14:00-ին**, Չարենցավանի պետական քոլեջում, հասցեն՝ ք. Չարենցավան, Խորենացի 1։
Տեղեկությունների համար զանգահարել՝ (0226) 4-32-82, (077) 59-96-75, (077) 61-45-20 հեռախոսահամարներով։

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «*Երեւանի հ. 1 արհեստագործական պետական ուսումնարան*» ՊՈԱԿ-ի «*ԻնՖորմատիկա*» (19 դասաժամ) առարկա դասավանդող մանկավարժի թափուր տեղի համար։

Մրցույթն անցկացվում է մեկ փուլով՝ հարցազրույցի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- *դիմում* («Չեւ 1»), մեկ լուսանկար՝ 3X4 չափի,

- *բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)* կամ *միջին մասնագիտական որակավորման փաստաթուղթ,*

- *«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26 հոդվածի1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույքի պատճենը (առկայության դեպքում),*

- *ինքնակենսագրություն* (Չեւ 5),

- *այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,*

- *հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),*

- *որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ։*

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բժօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բժօրինակները վերադարձնում։ Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են **մինչեւ հոկտեմբերի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրեր**

Հայտարարություն

ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի փափուր տեղը զբաղեցնելու համար:

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

- 1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնակազման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային եւ էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի հոկտեմբեր 17-ից մինչև նոյեմբերի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00 -ից մինչև ժամը 15:00-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) եւ օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերից:
Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Տավուշի մարզի «Դիլիջանի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ ք. Դիլիջան, Կալինինի 137:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (055) 74-94-74 հեռախոսահամարով, էլ. հասցեն՝ dproc2.dilijan@mail.ru

Կորել է
Նարինե Արմենի Բաղդասարյանի՝ տարրական դասարանների ուսուցչի որակավորումը հավաստող՝ N AK 033092 դիպլոմը՝ տրված ՀՀ ԿԳՄՍՆ «Չարենցավանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից:
Համարել անվավեր:



«Կրթություն» շաբաթաթերթը բաժանորդագրվելու համար դիմեք մոտակա փոստային բաժանմունքներին:



ՀԻՄՆԱԳԻՐ՝
ՀՀ ԿԳՆ
«Կրթություն» թերթի խմբագրություն» ՊՓԲԸ

«Մեղու» մրցույթը վերադառնում է նոր մոդելով՝ մեծացնելով դպրոցների դերն ու բացելով նոր հնարավորություններ սովորողների համար

«Մեղու. հայերենը բոլորի համար» մրցույթում «Այբ» կրթական հիմնադրամը ներդրում է նոր՝ դպրոցների բաժանորդագրության մոդել: Նպատակը՝ ՀՀ, Արցախի եւ սփյուռքի աշակերտների, ուսուցիչների եւ դպրոցների համար ավելի մեծ հնարավորություններ ապահովելն է:

Բաժանորդագրության փաթեթային մոդելով դպրոցները հնարավորություն ունեն նվազագույն ռեսուրսներով ապահովելու 3-12-րդ դասարանների բոլոր աշակերտների մասնակցությունը մրցույթին, անվճար գրանցումը հարթակում եւ ազատ հասանելիություն մրցութային բոլոր նախապատրաստական նյութերին: Սրան զուգահեռ մեծացվում է մրցութային հարթակի կառավարելիությունը՝ ստեղծելով կրթական որակյալ բովանդակություն, միավորների ավտոմատ հաշվարկ, պարզեցված կառուցվածք եւ առավելագույն տեխնիկական սահունություն մասնակիցների համար: Այս ամենը հնարավոր է դառնալու դպրոցների հետ համակարգված գործակցության շնորհիվ՝ ապահովելով մրցութային օրերի արդյունավետ բաշխվածություն սովորողների տարբեր տարիքային խմբերի համար:



դեկտեմբերի վերջին: Գրանցման ընթացքին եւ թարմացումներին հետեւելու համար մրցույթի նախաձեռնող «Այբ» կրթական հիմնադրամը բացել է վայրերյան խումբ՝ Ayb Educational Foundation վերտառությամբ:
«Մեղու» մրցույթը, ժամանակակից առցանց թեստերի իր գործիքակազմով, հայոց լեզվի եւ տրամաբանության շուրջ է համախմբում սովորողներին եւ միավորում մտքի զարգացման համընդհանուր օրինաչափությունը հայերենի ճանաչողական նպատակների հետ: 2014-ից «Մեղուն» այս առաքելությամբ անցկացվում է ՀՀ եւ Արցախի, իսկ 2019-ից՝ սփյուռքի 3-12-րդ դասարանների աշակերտների համար:

Տեղեկատվական հովանավոր՝ «Կրթություն» շաբաթաթերթ



Գրանցման վկայական՝ 01U-049349, Տրված է՝ 11.01.2001թ.
Դասիչ՝ 69312,
Հասցեն՝ ՏԻԳՐԱՆ Մեծի 67,
E-mail: krtutun@yandex.ru
Հեռ. 57 49 56

Խմբագրությունը ստացված թղթակցությունները եւ նամակները չի գրախոսում եւ ետ չի վերադարձնում: Չպատվիրված հոդվածների համար հոնորար չի վճարվում:
Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը պարտադիր է:

Տպագրված է «ՏԻԳՐԱՆ Մեծ» իրատարակչության տպարանում:
Տպաքանակը՝ 2000:
Ծավալը՝ 6 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 11.10.2022թ.
Գինը՝ 400 դրամ:

Համարի պատասխանատու՝
Գլխավոր խմբագիր՝
Գագիկ ՄԻՆԱՅԱՆ